

**ՆԵՄԵՍԻՍ
(ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ)**

**ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ
(ՎԵՐԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ)**

Բ. հրատարակություն

Հրատարակիչ՝ «ՀԱՅՐԵՆԻՔ» ակումբ

Երևան – 2015

Խմբագիր՝ Ավագ Հարությունյան

Շահան Նաթալի, Թուրքերը եւ Մենք: Հրատարակիչ
«Հայրենիք» ակումբ: Երեւան, 2015, 68 էջ:

Շահան Նաթալիի «Թուրքերը եւ Մենք» գրքույկն ունեցել է
չորս հրատարակություն (Աթենք, 1928, 1931, Երեւան, 1991,
2011): Ներկա վերահրատարակման համար հիմք ենք ընդունել
1931թ. տպագրությունը:

© «Հայրենիք» ակումբ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Շահան Նաթալին՝ Հակոբ Տեր-Հակոբյանը (ծնվ. 1884, գ. Հուսեյնիկ, Խարբերդ-մահ. 1983, Բոստոն) 20-րդ դարի հայոց ազատամարտի կարկառուն դեմքերից է, որին իրավամբ անվանում են Հայոց Նեմեսիս:

Նրա «Թուրքերը եւ Մենք» դասական ստեղծագործությունն ունեցել է չորս հրատարակություն (Աթէնք, 1928, 1931, Երեւան, 1991, 2011): Ներկա վերահրատարակման համար հիմք ենք ընդունել 1931թ. տպագրությունը՝ հաշվի առնելով վերջինիս ամբողջական լինելը:

Նաթալին հանգամանորեն քննում է մեր պարտությունների պատճառները, թուրքին ու նրա հայատյացությունը հիմնավոր դիտարկում հայրենատեր հայի տեսանկյունից: Քննադատելով օտարին ապավինելու մեր մեջ տիրող մտայնությունը, նա պատգամում է. «Քու գործերուն անդաւաճան մէկ հոգի կայ, դուն ինքդ ես, քու ուժդ է»:

Վերլուծելով մեր ազատագրական պայքարում գրելիքի ու խոսելիքի դերը՝ նա ճշմարտացիորեն եզրակացնում է. «Գրիչն ու լեզուն իրենց ուժը միայն բազուկէն կ'առնեն», «Մէկ գնդակ հազար թերթի ու ճառի ուժ ունի»:

Հայոց Նեմեսիսի՝ Շահան Նաթալիի այս երկն ուղղված է առաջին հերթին հայ երիտասարդությանը, և հատկապես՝ վրեժով լեցուն ու դրան հոգեպես նախապատրաստվող ու այն իրականացնելու կարողունակ Հայրողիներին. «Մէկ է վրեժը եւ Հայն անոր առաքեալն է: Վրէժէն զատ աստուած չպաշտես»:

ՄԻԱԲԱՆԵԱՅ ¹

Հազար հազար տարիներ, հրեական ասանդագիրքի – Աստուածաշունչի – Ծննդոցը, իբր աղօթագիրք գլխահակ կարդաց Հայ ժողովուրդը և ծնկաչոք չափեց անապատները, առանց գոնե մեկ անգամ ստեղծելու իր Մովսեսը, որ ճեղքեր ծովը ու առաջնորդեր զայն, արձանագրելու համար հայկական «Ելից»-ը:

Հազար հազար տարիներ, Հայը կարդաց զայն բարձրաձայն ու աղօթեց բազկատարած, բայց չկրցաւ բաղդատութեան դնել Փարաւոններու նախճիրները Սուլթաններու արիւնատօներուն հետ, և եզրակացնել, թէ եթէ եգիպտական զարհուրանքները ծնան Մովսէսն ու Տասնաբանեան, ինչպէ՞ս թրքական արհաւիրքները չծնան մեկ Մովսէս, որ տար գոնե միաբանեան:

Գուցէ թրքական զարհուրանքները այնքան ուժգին էին, որ հայ արգանդը մեկ սաղմ անգամ արգասատորելու կարողութենէն զրկեցին: Գուցէ:

Եթէ սակայն, փաստն այդ է, վա՛յ այս ժողովուրդին, որ հինգած առաքինութիւններու փոխասացութեան ծիծաղելիութիւնն ունի իբր հոգեւարքային հծծին:

Բայց ես, որ կը հաւատամ, թէ անբնական է ու տիեզերական օրէնքի ժխտումը, որ մարդկային արիւնները չալեկոծին ու նահատակները աւելի «քան զաւագ ծովու» չհրաբխին անապատներէն, կը գրեմ նոր Ծննդոցը – միաբանեան Հայութեան:

Իմ խօսքս անոնց է, որ երիտասարդ են, երիտասարդ են հոգիով ու զերծ՝ զառամած ուղեղներու դատումներէն:

Անոնց, որ անապատներու աւազներով մկրտուեցան ու այսօր քաղաքներու ճահիճներուն դէմ իրենց գոյութեան պայքարը կը մղեն:

¹ Որպէս «Նախաբանի տեղ» գրված «Միաբանեայ»-ն բացակայում է առաջին և հետագա հրատարակություններում: Այն տպագրվել է միայն 1931թ. 2-րդ հրատարակությունում:

Անոնց, որ դիակներ համրելէն յոգնեցան եւ այսօր կը յամառին դիակնացումի դէմ իրենց սրտի բաբախիւնը պահել:

Անոնց, որ իրենց հարազատներու ոսկորներով կերակրուեցան ու ապրեցան եւ այսօր ճերմակ հացով կը թունաւորուին:

Անոնց, որ իրենց հօր դիակը անթաղ թողուցին, մօր հետքը կորսնցուցին անապատներու մէջ, քրոջ պատիւին ծախուիլը տեսան թրքական բազարներու մէջ, եղբօր խոշտանգուած դիակին վրայ կոխկոշտելով փախան այսահար:

Անոնց, որ իրենց շէն տնակներու ատրակներու մոխիրներէն ճողոպրեցան եւ իրենց վերքերէն թորող արիւններով իրենց պապակը յագեցուցին:

Անոնց, որ որբի եւ գաղթականի թոյնը ցմրուր խմեցին, հորիզոնէ հորիզոն:

Եւ վերջապէս անոնց, որ այսօր, ամէն օր մահին դէմ կը պայքարին ու ամէն գիշեր սրբազնագոյն միակ աղօթք՝ իրենց քալած ճամբային զարհուրանքովը կը մտնեն խշտեակի մը կեղտերուն մէջ:

Իսօքս անոնց է, որոնց մէջ կը տեսնեմ անծանօթ Մովսէսը հայ տառապանքին եւ հայ Իսրայէլը, որ գիտէ անապատներէն անցնիլ ու ծովերը ճեղքել դէպի Աւետեաց երկիր երթալու ուխտով:

Մէկ է վրէժը եւ Հայն անոր առաքեալն է:

Վրէժէն գատ աստուած չպաշտես:

Ա.

Հայկական աշխարհաճառալ աղետներու մասին ամէն օր եւ ամէն տեղ տասնեակներով թերթերու եւ հարիւրեակներով ժողովներու մէջ ընթերցողն ու ունկնդիրը կը լսէ մէկ բան.

«Մեր բոլոր աղետներուն պատճառները ուրիշներն են»:

Ինչ պատմութիւններ չենք գիտեր Ռուսիայի մասին: Կա՞յ օրօրոցի երախայ մը՝ անգամ որ Լօպանօֆի² «առանց հայի Հայաստանը»-ը չէ լսեր:

Ինչե՞ր չենք գիտեր Անգլիայի մասին, որ իր «մարտանաւերը չի կրնար Արարատի գագաթը բարձրացնել»³:

Իսկ Գերմանիա՞ն: Չէ՞ որ «մէկ Դէոյշ զինուորի ոսկորը չի փոխեր ամբողջ Հայ ազգին հետ»⁴:

Ֆրանսա՞ն, Իտալիա՞ն, Ամերիկա՞ն: Վերջապէս ո՞ր մէկը...:

Սո՞ւտ են այս պատմութիւնները: Ո՛չ:

Ճիշտ են բոլորն ալ: Բայց նոյնքան ճիշտ է նաեւ որ հայ աղետներուն բոլոր պատճառները այդ պատմութիւններուն մէջ չեն:

Բայց մեր խմբագիրները, ճառախօսները, գործիչները այնքան շատ են կրկներ այս պատմութիւնները, որ Հայ ժողովուրդը, կուսակցական շարքերը, եւ իրենք իսկ քարոզիչները՝ կամ անգիտօրէն կամ գիտակցօրէն այլեւս չեն հարցներ.

Իսկ մենք՝ հայերս ռեւէ մեղք չունի՞նք մեր աղետներուն մէջ:

² Խոսքերի հեղինակը Ալեքսեյ Լոբանով-Ռոստովսկին է (1824-1896): Եղել է Ռուսաստանի արտգործնախարարը (1895-1896):

³ Խոսքերի հեղինակը Բենջամին Դիզրայելին է (1804-1881): Եղել է Մեծ Բրիտանիայի վարչապետը (1874-1880):

⁴ Խոսքերի հեղինակը Օտտո Բիամարկն է (1815-1898): Եղել Գերմանիայի ռեյխսկանցլերը (1871-1890):

Եւ մեր վայրերանութիւնը միշտ ուրիշներու մասին եւ առանց ինքնանդարտարձումի եղած է, մեր կարծիքով, հայ ժողովուրդի աղէտներուն մեծագոյնը:

Ահա այս ակնոցով եւ ինքնաքննադատութեան գետնի վրայ է, որ պիտի ջանանք ցոյց տալ, թէ որքա՛ն մեղքեր ունինք մենք, որոնց շատերուն հետեւանքներն են միայն ուրիշներու մեղքերը: Մեղքեր, ռճիրներ, որոնց պատմութիւնները այլեւս անհամ դառնալ սկսած են, ո՛չ մէկ օգուտ չեն տուած մեզի, ո՛չ մէկ դարման եղած են եւ մեզ դարձուցած են հէքեաթ պատմող մամիկներ:

Արիւնով ուսմանտիկ ժողովուրդ, իրականութիւն ենք համարեր այն՝ ինչ որ բաղձացեր ենք:

Ո՞ր արեւմտահայը «Քեռին» չէ տեսեր իր սարերուն վրայ:

Բայց թողունք հին պատմութիւնները:

Այսօր ո՞ր հայն է, որ Թուրքիայի տնտեսական, ֆիզիքական ու քաղաքական քայքայումը չի տեսներ ամէն օր:

Վերցուցէք պատահական ռեւէ հայ թերթ, զեղծում, արտաքին աշխարհի անվստահություն, ծնունդներու նուագում, քաղաքական պարտութիւններ... Եթէ մէկ անգամ ճիշտ են աստոնք, անկեղծ եւ առարկայական ըլլանք ըսելու, թէ տասն անգամ աւելիով անոնց արձանագրութիւններուն մէջ կան մեր ենթակայական բաղձանքները:

Մենք կը ճանչնանք հայ քաղաքական կեանքի ճակատագիրը վարող գործիչներ, որոնք մոռցած հայ ժողովուրդի անճիտումին ողբերգութիւնը, հայ ազգը փրկելու գործ կատարած ըլլալ կը կարծեն, օրինակ, հաւաքելով թուրքերու աճեցումին տոկոսները կամ ճառի մը ու յօդուածի մը նիւթ կ'ընեն որոշ շրջաններու մէջ քանի մը հարիւր հազար թուրքերու ու քիւրտերու գոյութիւնը, իբր ապացոյց թուրքերու փճացման, երբ փաստն այն է, որ այդ տեղերուն մէջ հայ մը անգամ չկա՛յ:

Ի՞նչ կ'ապացուցանէ այս:

Այն, որ հայ նոյն իսկ քաղաքական միտքը թուրքին չորթանը հային հիշէն պակաս գնահատելու աղէտը գործած է ու կը գործէ:

Եւ երբ ըսուի իրենց, թէ այդ բոլոր փաստերն ու արձանագրութիւնները ճիշտ ըլլալով մէկտեղ ճիշտ է նաեւ փաստն մըն ալ, որ քայքայուող Թուրքիան կ'ապրի այսօր, երբ մենք կը մեռնինք:

- «Ազգերու կեանքին մէջ տասնեակ տարիները ակնթարթներ են», - կը պատասխանեն:

Ու չեն անդրադառնար, որ այդ խօսքը որքան ճիշտ է Հային համար, նոյնքան ճիշտ է Թուրքին համար: Եւ աւելին, այդ խօսքը վերածնունդի պարագային որքան ուղիղ համեմատական է Թուրքին համար, մահացումի պարագային նոյնքան խոտոր կը համեմատի մեր կեանքին:

Բայց Վիէննայի դուռներէն եւ Սպանիայէն մինչեւ Վոսփորի եզերքները քաշուած ըլլալու պատմութիւնները այնքան երկար են ու ձանձրացուցիչ, որ ո՛չ ժամանակ եւ ո՛չ ալ սիրտ կը թողուն պռռալու, թէ՛ վերջապէս չէ՞ որ քառասուն միլիոնի պատմութիւններ ալ մենք ունինք:

Վերջապէս, առանց երկարելու շատ տխուր պատմութիւններ եւ բիւզանդական վէճերու մէջ մտնելու յայտարարենք, որ հայ քաղաքական կեանքին գլխաւոր անկիւնաքարը ե՛ւ ներքնապէս ե՛ւ արտաքնապէս եղած է - ամէն նպաստաւոր փաստ մեզ համար, եւ ամէն աննպաստ փաստ թուրքին համար:

Կը յուսանք, թէ այս մասին տարակարծութիւններ չկան:

Եւ մեր կարծիքով, ահա առաջին ակը մեր բոլոր դժբախտութիւններուն:

Թուրքը տգէտ է, Հայը՝ ինելացի, Թուրքը վայրենի է, Հայը՝ կիրթ, Թուրքը անարհեստ է, Հայը՝ արհեստաւոր, Թուրքը աղքատ է, Հայը՝ հարուստ... Եւ մինչեւ այնտեղ, որ Թուրքը

դիպլոմատ չէ, Հայը՝ քաղաքագետ... հետեւաբար Թուրքը կը մեռնի, Հայը՝ կը վերածնի:

Հայ քաղաքական ճակատագիրին մեծագոյն ոճրագործ-
նութիւնը կատարած է այն մարդը, որ առաջին անգամ այս
ակնոցը դրաւ հայի աչքերուն եւ ժամանակի ընթացքին ան մեզ
կուրցուց այն աստիճան, որ իրերը չենք կրնար տեսնել իրենց
իսկական գոյնով:

Կարելի է երեւակայել մեր կուրուքեան չափը, երբ, օրինակ,
գիւղացիի մը զավակ հայ խմբագիրը յայտարարէր, թէ Սուլթան
Համիտ դիպլոմատ չէր: Եւ այս փաստ է:

Մեր նպատակն է վերգնահատումով մը դիտել շարք մը
փաստեր, մէկդի դնելով այն ակնոցը, որ մեր բաղձանքներուն
գոյնն ունի, եւ հակառակ մեր արդար եւ աննահանջ ասել-
ութեան ու վրէժին, որ ունինք դէպի թրքութիւնը՝ ցոյց տալ, թէ
ինչպիսի առաւելութիւններ ունին անոնք մեր վրայ: Որովհետեւ
մեր պարտութիւններուն գլխաւոր պատճառը թշնամիին ուժերու
առաւելութիւնը չճանչնալուն մէջ կը գտնուի: Աւելին, անոր
տկարութիւնները միայն ճանչնալուն մէջ:

Այս է պատճառը, որ մենք յաճախ մղած ենք պայքարներ
սխալ ռազմավարութիւնով եւ ճանչնալով միայն մեզ դիմաւորող
թուրք հետեւակը, բաց դաշտ ենք նետուեր՝ անգիտակ թշնամի
թնդանօթին, որ բլուրին ետեւ մեր դիրքը ճշդած՝ ոմբակոծեր է
մեզ: Եւ արդիւնքը ճակատագրօրէն պիտի ըլլար մեր պարտ-
նութիւնը, որքան ալ հերոսական ըլլային մեր ճիգերը:

«Թշնամիիդ տկար կողմը ճանչցիր անկէ հարուածելու
համար զայն» խօսքը ամբողջութիւն մը չէ եւ յաճախ աղիտաւոր:
Պէտք է ամբողջացնել զայն աւելցնելով «ճանչնալով անոր
թիկունքը սպասող ուժը»:

Թուրքին տկարկողմերուն մասին շատ ենք լսեր:

Եւ ցաւալին այն է, որ այն բոլոր տկարութիւնները, որոնց մասին միշտ կը խօսինք, չենք անդրադառնար, որ թութակի պէս կը կրկնենք ինչ որ Անգլիացին, Ֆրանսացին, Ռուսը կամ Գերմանացին ըսած են Թուրքի մասին: Կը մոռնանք, որ մենք Հայ ենք: Եւ ինչ որ տկար է Անգլիացիին համար՝ այդ ուժեղ է մեզի համար:

Այդ պատճառով ալ մեր քննութիւնը հեռու պիտի ըլլայ Եւրոպացիներու գրած հատորներու փաստերէն: Հայ կեանքը ծով հատոր մըն է արիւնտ փաստերու, եւ մենք պիտի թիավարենք մեր արիւնի ալիքներուն վրայ եւ Հայի աչքերով, տեսնելու համար Թուրքը այնպէս, ինչպէս որ է Հային հետ կանգնած:

Հերիք է, որ Էյֆելի գլուխէն դիտեցինք թուրք մինարէն եւ անոր բարձրութիւնը արհամարհեցինք: Էյֆելը Ֆրանսացիին կը վայելէ, մեր տեղը՝ գմբէթը քանդուած եկեղեցիի մը տանիքն է առ առաւելն եւ անկէ է, որ պիտի դիտենք մինարէն, որպէսզի ըմբռնենք, թէ անոր բարձրութիւնը բաւական էր մահաբեր անկումի մը համար:

Վկայ մեր ոսկորները:

Դիտենք ուրեմն Թուրքը գուտ հայկական ակնոցով:

Բ.

Հայ-թուրք կռիւր անխուսափելի էր:

Մեր արիւնոտ պատմութիւնն ու հատորները աւելիովը պատճառաբանած եւ հիմնաւորած են մեր պայքարի արդար-
ութիւնն ու անխուսափելիութիւնը:

Ու կռուեցանք:

Յայտարարենք նաեւ, որ այս կռիւին մէջ մենք պարտուե-
ցանք:

Մեր պարտութիւնը խոստովանիլը ո՛չ կը ժխտէ պայքարին արդարութիւնը, ո՛չ ալ կը նսեմացնէ հայ ֆետայիին հերոս-
ութիւնը, որ քառասուն դէտրու դէմ կռուող կտրիճին հեքեաթ-
ութեան հաւասար եղաւ:

Ինչո՞ւ սակայն պարտուեցանք:

Հատորները կը պատասխանեն աւելիովը արտաքին այն պատճառները, որոնք մեծ դեր կատարած են մեր պարտութիւն-
ներուն մէջ:

Ռուսը դաւաճաներ է մեզ: Դէպի Միջերկրական իջնելու ճամբան ուզեր է ունենալ առանց հայի եւ այդ ծրագիրը առաջ տարեր է մէկ կողմէն մեզ քաջալերելով, միւս կողմէն՝ թուրքին ձեռքով կոտորել տալով:

Անգլիացին իր արեւելեան քաղաքականութեան եւ տնտեսական շահերուն ի գին ծախեր է մեզ:

Ֆրանսացին մեր զէնքերով ու արիւնով Կիլիկիան գրաւելէ յետոյ Թուրքին բարեկամութիւնը վաստակելու համար լքեց մեզ անզէն՝ թուրք եաթաղանին առջեւ:

Իտալացին Իզմիրը իրը համարելով, Թուրքին զէնք տուաւ Յոյնը դուրս նետելու համար եւ հրդեհին մէջ այրեց մեզ:

Ամերիկացին գեղեցիկ ճառերով օրօրեց մեզ եւ քարիւղի քանի մը հորերով խարոյկեց մեր դատը:

Նմոյշներ են ասոնք միայն, որոնցմէ ամէն մէկին ետեւ կայ ահաւոր ողբերգութիւն մը, եւ որոնց մասին հայ մանուկէն մինչեւ գրեւ կարդալ չգիտցող պառաւը կրնայ ձեզի պատմել: Չէ՞ որ իր օրերով, իր աչքերուն առջեւ եւ իր մարմնոյն վրայ տեղի ունեցող դէպքեր են:

Բայց այս բոլորը բոլորին գիտցած բաներն են:

Խօսինք քիչ մըն ալ ուրիշ պատճառներու մասին: Որովհետեւ որքան ալ ճիշտ են օտարներու վերագրուած պատճառները, մեր կարծիքով, անոնք չեն միակ պատճառը մեր պարտութեան:

Անոնք կատարեցին աղէտաւոր դեր յետոյ, իսկ առաջին ու ճակատագրական պատճառը մեր մէջ է:

Ի՞նչ էր մեր կոնիւն հիմքն ու սկզբունքը:

- Ըլլալ ազատ մարդ, տէրը մեր քրտինքին, ապրիլ մեր պատիւով եւ զարգանալ ազգային արժէքներով:

Թուրքը մեր միջոցներով չէր, որ պիտի ճանչնար մեր ուխտը: Մենէ առաջ շատեր՝ Յոյներ, Սերպեր, Բուլգարներ, Ռումէններ, նման ուխտով իջեր էին հրապարակ եւ հասեր էին իրենց նպատակին՝ ի վնաս թուրքին:

Թուրքը ըմբռներ էր գոյութեան այս կոնիւն իմաստը, որ իր գոյութեան վրայ անդրադարձեր էր իրեն համար ալ գոյութեան կոնիւն ձեւով:

Ուրեմն, Թուրքին եւ մեզ համար պայքարի սկզբունքը անխուսափելի էր եւ ծանօթ:

Հետաքրքիր չէ, թէ ո՞ր կողմն էր արդար եւ ո՞ր կողմը՝ անարդար. կարելորը պայքարի փաստն է: Մանաւանդ, որ մեր պատմութիւնը լեցուն է արիւնտ ապացոյցներով, թէ պայքարի մը մէջ յաղթելու համար արդարութիւնը դեռ բաւարար պայման չէ:

Եւ ահա դժբախտաբար առաջին օրէն իսկ, մենք հայերս, երբ կոնիւ յայտարարեցինք, ընդօրինակեցինք միայն այն, որ Բալկանի ժողովուրդներն էին ըրեր:

Միսլ չհասկցուելու եւ տխուր փրօփօկասիօնի տեղի չտալու համար կ'ընդգծենք միայն բառը, որովհետեւ վեճ չկայ, թէ պիտի ընդօրինակելինք անոնք, անոնց պայքարի զենքերը, անոնց ըմբոստութեան ձեւերը, եթէ անպատճառ ուզուի վեճ յարուցանել՝ վեճը պիտի լինի մէկ կէտի շուրջ. այն թէ մենք կը յայտարարենք – ընդօրինակելով մէկտեղ մենէ առաջ ազատագրուող ժողովուրդներու զենքերն ու ձեւերը՝ պետք էր ունենայինք նաեւ հայկականը:

Ռոմվիհետեւ, եթէ ճիշտ է, որ Յոյնը, Սերպը, Բուլղարը, Ռումէնը ունէին նոյն թշնամին – Թուրքը – նոյն բռնութիւններն ու ջարդերը տեսեր էին, ունէին ազատագրական նոյն իտեալը՝ ինչպէս Հայը, աւելի ճիշտ է նաեւ, որ անոնք ունէին տարբերութիւններ ալ. անոնք Յոյն, Սերպ, Բուլղար, Ռումէն էին, մենք՝ Հայ էինք, անոնք Եւրոպայի մէջ էին, մենք՝ Ասիոյ մէջ:

Այս երկու շատ էական տարբերութիւնները, իրենց շատ մը ստորաբաժանումներով, անտեսուած էին մեր ազատագրութեան ռահվիրաներուն կողմէ եւ այդ անտեսումը ճակատագրական դեր է կատարած մեր պարտութեան մէջ:

Յայտարարել այս պարագան թող երբեք ուրացում չհամարուի անոնց յիշատակը, որ իր սրբութիւնը ազատագրութեան գաղափարէն կ'առնէ եւ ռեւէ սխալ չի կրնար նսեմացնել զայն: Բայց այսքան արիւնոտ պատմութիւնները անցնելէ յետոյ, յանուն ամենանուիրական երկիւղածութեան անգամ, չարձանագրել այս թերին, պիտի նշանակէր յաւերժացնել անօգուտութիւնը թափուած ու թափուելիք արիւնին, որի համար ամէնէն մեծ ազատութիւնն ու Հայաստանն անգամ դէռ քիչ է:

Եթէ սակայն, մեր հայրերը արդարացումն ունին անփորձութիւնը՝ այս մեծ թերացումին համար, մենք, անոնց որդիները, շատ աւելի յանցաւոր ենք, որ արիւնոտ դէպքերուն առջեւ չսրբագրեցինք սխալը: Եւ մեր կարծիքով, մենք, որ արիւններու

մէջ ծնանք ու արիւններու մէջ մեծցանք, ահաւոր աղէտի մը վերածած ենք մեր հայրերուն սխալը, եւ կը շարունակենք, երբ մեր ճառերուն մէջ, այսօր իսկ, Յոյն, Սերպ, Բուլգար, Ռումէն ժողովուրդներու պատմութիւններով միայն կը սնուցանենք մեր ժողովուրդը, երբ անոնց կրած ջարդերու մասին խօսելով միայն կը հիմնաւորենք մեր բռնագրօսօրէն քաջալերական ճառերը, երբ կարկտնուած յոյսեր տալու համար մեզ լսողներուն՝ Յոյներու քառորդ միլիոնով ազատագրուելուն պատմութիւնները կը կրկնենք ու կը կրկնենք:

Եթէ յուսադրելը լաւ բան է, նոյնքան ալ վատ ու աղէտաւոր է յուսադրութիւնը, երբ անոր հիմքերը խախտուտ են:

Այս՝ առաջին սխալն է, որ մեր հայրերը սկսան եւ մենք՝ որդիներս զայն դարձուցինք աղէտ ու կը տանինք զայն անոր ուժը սաստկացնելով, կրկնելով նոյն բառերով նոյն քարոզները կամ տգիտաբար, ո՛չ մէկ բան սորված ծով արիւններէն եւ կամ գիտակցաբար ու աղէտաւոր յուսադրութեան մը ոճրագործութիւնով:

Իսկ այս սխալին մէջ կը տեսնենք, որ եթէ ոչ միակը՝ բայց մեծագոյնը Հայն է, մենք ենք պատասխանատուն:

Երկրորդ ճակատագրական սխալը:

Մեր հայրերը չըմբռնեցին, թէ Թուրքը Յոյն, Սերպ, Բուլգար, Ռումէն ժողովուրդներու ապստամբութիւններէն եւ ազատագրական պայքարներէն եթէ դուրս եկած էր հսկայ հողեր եւ միլիոններով ժողովուրդ կորսնցնելով, նաեւ սորված էր շատ բան:

Ի՞նչ էր սորված Թուրքը այդ բոլորէն: Շատ ահաւոր մէկ բան, որ իր յաղթանակին գլխաւոր զէնքը եղաւ հայ-թուրք կռիւին մէջ:

Ան սորված էր, որ Բալկանները Եւրոպայի մէջ կը գտնուին, ուր որքան ալ իր բարբարոսութիւնները գործ դնէր զանգուածներու վրայ, անոնք հազիւ կրնային հասնիլ չարիքի արմատ ժողո-

վորդի հաւաքականութիւնը արմատախիլ ընելու: Եւ ինք պարտուած էր, որովհետեւ իր ճակատամարտը ըմբոստներու խումբերու, զանոնք պահող պաշտպանող գիւղերու եւ քաղաքներու վրայ էր եւ ոչ թէ (անկախ նոյն իսկ իր կամքէն) ժողովուրդներու բնաջնջումի գետնի վրայ:

Հայն ու Հայաստանը սակայն կը գտնուէին Ասիոյ մէջ, հետեւաբար ոչ միայն ռազմաճակատը փոխուած էր ի նպաստ Թուրքին, այլ եւ, իբր արդիւնք նախորդ պարտութիւններուն, ինք, Թուրքը, պէտք էր փոխէր նաեւ ռազմավարութիւնն ու զէնքը:

Իսկ այս բաները գիտնալ՝ կը նշանակէ շատ բան գիտնալ կրուելու եւ յաղթանակը ապահովելու տեսակէտէն:

Եթէ մեր ձեռքը չէր փոխել ռազմաճակատը, մեր ձեռքն էր ճանչնալ թշնամիին զէնքը եւ այդ շատ բան պիտի փոխէր մեր դրութենէն:

Ու սկսաւ կռիւր:

Գ.

Կրկնենք:

Կռիւր անխուսափելի էր:

Մենք պէտք էր կռուէինք մեր ակռաներով անգամ, եթէ կ'ուզէինք մարդ ապրիլ:

Եւ կռուեցանք աւելի քան դիւցազնօրէն, որովհետեւ կ'ուզէինք մարդ ապրիլ: Մարդ էինք ամէն արժանիքներով, քան ունէ մարդ այս արեւին տակ:

Եւ թող սուրբ ըլլայ յիշատակն անոնց, որ յեղափոխութեան սրբութիւնը իրենց արիւնով հռչակեցին:

Բայց քիչ մը դիտենք զէնքերն ու կռիւի ձեւերը, որոնք գործ դրուեցան այս ահաւոր գօտեմարտին մէջ:

Բանակ չունէինք ինչպէս մեր թշնամին: Այդ մեր յանցանքը չէ: Թնդանօթներու եւ կատարելագործուած հրացաններու դէմ կանգներ էինք շէշխաններով: Այդ էր մեր կարելին:

Զինուորական բարձր կրթութիւնով պատրաստուած հրամանատարներ չունէինք: Հայի որդի, քարի որդի, ջան ֆէտան էր մեր հրամանատարը: Այդ էր մեր հնարաւորութիւնը:

Ըսել ու խրատ կարդալ, թէ սպասէինք ուրեմն, մինչեւ որ բանակ, թնդանօթ ու հրամանատար ունենանք, պիտի նշանակէ տգիտօրէն ուրանալ այն փաստը, թէ Թուրքը չէր սպասէր, անոր համար սպասել պիտի նշանակէր կորսնցնել Հայն ու Հայաստանն ալ, եւ այս բանը Թուրքը շատ լաւ գիտէր:

Ո՛չ թնդանօթը, ո՛չ հրամանատարը, ո՛չ ալ բանակը յաղթեցին երէկ մեր շէշխանելի ֆէտայիներուն, որքան ալ անոնց դէրը մեծ է եւ մեծ եղաւ կռիւին մէջ:

Առէք վերջին կէս դարի ընթացքին հայ եւ օտար թերթեր եւ դուք պիտի կարդաք մէկ բան, աւա՛ղ միայն մէկ բան – թէ Թուրք կառավարութիւնը կը կոտորէ, կոտորեց հայ խաղաղ գիւղացին, հայ մանուկն ու ծերը, այսինքն՝ ժողովուրդը:

Քառասուն տարի տեսանք այս փաստը եւ ողբալի պատմութիւններով լեցուցինք աշխարհը, մինչեւ որ Հայ անունը նոյնացաւ կոտորուող աշխարհի, վախկոտ նապաստակի եւ լաւագոյն պարագային՝ հայ մուրացող որբին հետ:

Քառասուն տարի տեսանք Թուրքին կոտորածները, անցանք անոնց մէջէն, բայց չթափանցեցինք Թուրքին լօգունգը:

Ահա, ահաւոր աղէտը հայ սխալին, որի մէջ օտարը մեղք չունի կամ շատ քիչ ունի, որովհետեւ ամենէն առաջ մենք էինք, որ պէտք էր տեսնէինք մեր թշնամիին գիտութիւնը այս կոնիւն մէջ:

Եւ իսկապէս մեր շէշխանէն չպարտուեցաւ Թուրքի թնդանօթէն, այլ մեր լօգունգն էր, որ մահացուօրէն պարտուեցաւ Թուրքի լօգունգէն:

«Մահ Հայութեան»:

Ահա, Թուրքին դրօշը հայ-թուրք կոնիւնտրուն մէջ:

«Մահ Սուլթանին, փաշային, կուսակալին եւ ռէժիմին»:

Ահա, Հայի դրօշը:

Եւ թղթատեցէք մեր պայքարներու պատմութեան թերթերը, Հայը միշտ յաղթական է անհատներու եւ մինչեւ անգամ ռէժիմներու դէմ մղած պայքարներուն մէջ:

Իսկ Թուրքը պարտուած անհատապէս՝ յաղթական է միշտ ազգովին:

Մեր սխալը, աղէտաւոր սխալը այս փաստերը չտեսնելն էր, իսկ Թուրքին դէմ իր գէնքով չկռուիլը ոճիր մը եղաւ, որ մենք ամենէն առաջ եւ բոլորէն առաջ գործեցինք մեր ազգին ֆիզիքական գոյութեան դէմ:

Ու մենք ճակատագրուած էինք, անկախ արտաքին բոլոր դաւերէն, պարտուիլ ազգովին ու քաղաքականապէս: Որովհետեւ Հայ ազգին ուղղուած հարուածին մենք պատասխանեցինք Թուրք անհատին ուղղելով մեր հարուածը:

Ընդունինք, որ պարտուեցանք ազգովին եւ քաղաքականապէս, եւ չամչնանք յայտարարել նաեւ մեր պատասխանատունութիւնը:

Եւ ալ վերջ տանք որակի ու քանակի շուրջ անհամցած ճառերուն, որովհետեւ մեռելները, որքան ալ սուրբ ըլլան, անոնք չեն հաշուրւիր, երկոտանի անասունինն են անոնց հողաթումբերուն վրայ բուսած խոտերը: Ոչ ալ բոշայէ մը աւելի կ'արժեն ցրցքնուած տաղանդները: Անոնց տունն ու տեղը աւազակին աւելի կը վայլէ:

Այս է դատավճիռը աշխարհին՝ քաղաքական կեանքի մէջ:

Կրնայինք գործածել նոյն զէնքը. այսինքն Թուրքը երբ կը կոտորէր Հայը անխտիր, մեր կարելիութեան մէջ ընէինք նոյնը մենք՝ կոտորելով Թուրքը անխտիր:

ԱՅՈ՛՛

Եւ պէտք էր ընէինք:

Ով որ ուզէ վիճիլ այս մասին, մենք կը պատասխանենք նոյն իսկ վրդովմունք առաջացնող համարձակութիւնով.-

Կամ կեղծ էր ասպետականութիւնը

«Մի՛ վախենար բաջի ջան,

Կանանց երբեք ձեռք տալու չէ քաջ ֆէտան» բառերուն:

Եւ դերասանութիւն էին այն դէպքերը, որ խմբապետը մահ կը սպառնար, մահով կը պատժէր կին ու երեխայի ձեռք տուող ֆէտայիին:

Կամ կրնայինք, առիթներ ունեցանք որքան ալ պզտիկ իր ծաւալով ու հնարաւորութիւնով, կոտորել կինն ալ, երախան ալ, ծերն ալ, անզէնն ալ, ու չըրինք:

Ու պէտք էր ընէինք իբր պատասխան Համիտի քաղաքականութեան, որ կը ձգտէր Հայ ազգը բնաջնջել եւ ոչ թէ հայ ըմբոստները պատժել:

Կրնայինք ու պարտաւոր էինք ընել նոյնը դաւաճան սահմանադրութեան օրերուն:

Բայց մենք Կիլիկիայի (Ատանա) կոտորածին առջև պատասխանեցինք միայն հին զենքերով եւ քանի մը խասապներու կախաղանը վճարեց 20.000 հայութեան արիւնը:

Դարձեալ: Կրնայինք եւ պէտք էր նոյն զենքը գործածել պատերազմի ընթացքին բոլոր այն շրջանները, ուր մեր ձեռքը կը հասներ: Եւ մեր ձեռքերը հասան մինչեւ Էրզրում ու Երզնկա:

Եթէ մեր ձեռքը չէր արգիլել Բոլշեւիզմն ու անոր հետեւանքով մեր արիւնոտ նահանջը, մեր ձեռքն էր արգիլել, որ առաջին առիթով մեր կոնակէն զարնողներն ըլլան այդ շրջանին մէջ մնացող ո՛չ թէ միայն թուրք բանակայինները, այլ նաեւ ծերերը, երախաներն ու կիները:

Թո՛ղ չպատասխանուի, որ ռուսական իշխանութիւնը կար եւ մեզ կը պատժէր մահով: Կրնայ ըլլալ, որ անհատներ պատժուէին մահով, բայց մենք կը խօսինք ազգովին ընելու մասին եւ ազգ մը չէր պատժուէր, ինչպէս չպատժուեցաւ Թուրք ազգը:

Ով որ կը պնդէ, թէ չէինք կրնար ընել, մեր կարծիքով, անոնցմէ է, որ անձնապէս պատասխանատուութիւն ունի եւ ընդհանրացումներու մէջ կ'իյնայ իր իսկ մեղքը ծածկելու համար:

Չենք ուզեր յամենալ վէճերու մէջ: Մենք յայտարարեցինք եւ համոզուած ենք, որ կրնայինք եւ մեր ուժերով: Որովհետեւ գիտենք եւ այս ականջներով լսած ենք օրուան մարդու բերնէն, թէ կրնայինք ընել նոյնը Բագուի մէջ, ուր սէրը մենք էինք եւ ուր տասնեակ հազարով Թուրքերը լեցուցած էինք զօրանոցներու մէջ եւ, ով ոճրագործ ջենտրլմենութիւն, դուռներուն վրայ պահակ դրած էինք, որպէս զի քառսային տակնուվրայութեան այդ օրերուն, հայ արդարագոյն վրէժխնդրութենէն ապահով մնար հայութիւնը կոտորող այս զանգուածը:

Եւ ապահով մնացին ու ապրեցան անոնք, ինչպէս ջենտրլմենները, իսկ Բագուի փողոցները ներկուեցան 25.000 Հայի արիւնով:

Կրնայինք եւ պարտաւոր էինք Թուրքիայի գրաւման օրերուն ընել այնքան բան, որ Թուրք ժողովուրդը անընդունակ ըլլար Քէմալն ու Քէմալիզմը ստեղծել: Եւ կրնայինք ընել միայն մեզմով: Բայց մենք բաւականացանք հարիւրի մօտ անհատներ ձերբակալելով եւ, ո՞վ ոճրագործ միամտութիւն, յանձնել Անգլիային, յետոյ այնքան մեղադրելու համար Անգլիան, որ մոռնանք, թէ ան այնքան ուրացող չէղաւ մեր արիւնը Մալթայէն արձակելով, որքան մենք՝ զանոնք յանձնելով:

Եւ վերջապէս, կրնայինք եւ պարտաւոր էինք քայքայել Քէմալն ու Քէմալիզմը, երբ նստած էինք Պոլիս, Իզմիր, Կիլիկիա եւ մեր ձեռքերը կը հասնէին մինչեւ գաւառի խորերը: Ու եթէ չըրինք, եթէ չգործածեցինք այն զէնքը, որ գործածելով մեր թշնամին քառասուն տարի, արդար իրաւունքն էր տուած մեզ, եւ ողբալի ու պատասխանատու թութակութեամբ Քէմալը աւագակ եւ Քէմալիզմը երազ յայտարարեցինք, ետ չննալու համար Լօրտ Սիսիլէն, ընդունինք ու յայտարարենք, թէ Լօրտ Սիսիլէն առաջ մենք ենք պատասխանատուն, որ Թուրքն ուժովցաւ եւ Իզմիրն ու բնակչութիւնը կրակով այրեցան:

Այս պատկերը ժխտումը չէ բնաւ օտարներու դաւերուն ու խարդախութիւններուն, այլ միայն ընդհանուր պատասխանատուութիւններու մեջէն արագ կուրծք մը մեր բաժինէն:

Կրնանք հազարաւոր հատորներ գրել եւ գրած ենք այդ դէպքերուն վրայ եւ Թուրքը հռչակել զազան, ոճրագործ, աւագակ, ինչ որ կ'ուզէք – եւ սխալ չէ – բայց այդ բոլորը երբեք չեն փոխեր այն փաստը, որ ան ազգովին ու քաղաքականապէս աւելի գիտուն ու խելացի դուրս եկաւ հայ-թուրք կռիւին մեջ, որովհետեւ Հայը, անկախ բոլոր արտաքին պայմաններէն, չգիտցաւ եւ չուզեց գործածել յաղթանակի զէնքը:

Ու մենք պարտուեցանք, որովհետեւ պէտք էր պարտուէինք:

Դ.

Մէկ անգամ միայն, քառասուն տարիներու կոտորածներու ենթարկուելէ յետոյ, մէկ անգամ միայն հայ-թուրք գոյամարտին մէջ Հայը ցոյց տուաւ ազգ կազմելու իրական զէնքը:

Եւ այդ եղաւ այն մաքրագործումը Հայաստանի սահմաններուն մէջ, որ, ո՛վ ինչ կ'ուզէ թող յորջորջէ, Հայաստանի հանրապետութեան օրով կատարուեցաւ եւ միայն անոր արդիւնքն է այսօրի հայկական մեծամասնութիւնը հողամասի մը վրայ, որ թեկուզ բոլշեիկ, Հայաստան է այսօր եւ Հայութիւնը՝ ազգութիւն:

Քաղաքական միտքով ազգութիւն ու հայրենիք կը նշանակեն միայն նոյնատարր մեծամասնութիւն մը որոշ հողի վրայ: Ուրիշ սահմանումներ ազգի ու հայրենիքի մասին լրացուցիչ զարդերն ու շրջանակներն են այս էութիւնը կազմող պատկերին:

Ահա թէ ինչու համար, մեր կարծիքով, Հայաստանի հայացումը աւելի մեծ ակտ է ու նշանակութիւն ունի, քան Հայաստանի պետականօրէն ստեղծումը:

Վէճի ու փրօվօկասիօնի տեղի չտալու համար միայն յայտարարենք, որ մեր այս յայտարարութիւնը ո՛չ ժխտումն է, ո՛չ ալ ուրացումը Սարիղամիշի եւ Սարտարապատի հայրենաստեղծ հերոսամարտերուն, այլ միայն մեր համոզումը, թէ պետականօրէն աւելի մեծ քայլ էր Զանգիբասարի մաքրագործումը:

Եւ զարմանալին այն է, որ մինչեւ այսօր վախցեր ենք ճակատաբաց յայտարարելու այդ. գլուխնիս պատէ պատ զարկեր եւ սովեստական ճամարտակութիւններու մէջ ինկեր ենք մտավախօրէն մեր միակ ազգաշէն, ազգաստեղծ ակտը նսեմացնելով եւ պղծելով:

Մեր համար պարզ է, որ մեր այս դաւանանքին դէմ վլվլուկ բարձրացնողներ շատ պիտի ըլլան, մեզ ոճրագործ պիտի անուանեն աջէն ու ձախէն:

Այսպէս չըրի՞ն նոյն օրերուն շատեր Հայաստանի Խորհրդարանի բեմէն. վախկոտ քրթմնջիւններով չըրի՞ն նոյն իսկ Դաշնակցականներ, պետական կուսակցութեան անդամներ:

Իսկ այսօ՞ր, օ՞հ, ո՞վ չի կրնար աւելին ըսել, միտքով գիջացած սովեւսներու այս խառնիճաղանճի օրերուն:

Բոլոր խօսքերուն սակայն, մեր պատասխանը մէկ է:

Կարդացէք ազգերու կերտումի պատմութիւնը:

Մէկ բանի մասին միայն կ'ուզենք ըսել քանի մը խօսք, որովհետեւ այդ մէկը միայն կրնայ պղտորել ճշմարտութեան վրայ բացուելիք աչքերու տեսողութիւնը: Այդ այն է, որ պիտի աղաղակեն շատեր. «Ուրեմն, այդ դաւանանքով շիտակ են Թուրքին ըրածները ե՛ւ երէկ ե՛ւ այսօր: Այլեւս ինչո՞ւ կը բողոքենք անոնց դէմ, քանի որ անոնք ալ ազգ ստեղծելու ճամբան կը գտնեն այդ»:

Մեր պատասխանն է բոլոր այդպէս մտածողներուն.-

Այո՛, Թուրքերը Թուրք ազգ ստեղծելու համար բռնեցին շիտակ ճամբան: Իսկ անոնց քայլերուն դէմ մեր բողոքները պատմութեան, բոլոր ազգերուն եւ Թուրքերուն ալ ծիծաղը կը շարժեն միայն: Ո՛չ որ Հային չափ ողոքիչ բողոքներ չէ ըրած եւ ո՛չ որ ալ Հային չափ չէ տուժած եւ նախատուած: Որքան ուզենք բողոքենք, ինչ որ պիտի ըլլայ՝ կ'ըլլայ: Թուրքերն ալ բողոքեցին, բայց եղաւ ըլլալիքը, երբ մենք գոնէ մէկ անգամ գիտցանք ընել շիտակը: Եւ որովհետեւ Թուրքերը շատ աւելի իմաստուն են, անհամեմատ գիտնական են, քաղաքականօրէն շիտակ ընելիքներու մէջ, թող այլեւս չկրկնուի անհամեմատ այն միտքը, թէ մեր նման քայլը Թուրքերը կը գրգռէ: Թուրքերը այդ գետնի վրայ մենէ սորվելիք բան չունին: Հերիք է այս ամբարտաւանութիւնը: Մենք պէտք է սորվինք անոնցմէ ազգ կազմելու դասը: Եւ սակայն, աւա՛ղ, քառասուն տարիի մէջ մէկ անգամ շիտակ սորվեցանք մեր դասը:

Դժբախտաբար, սակայն, այդ դասը շիտակ սորվողները չխորացուցին ազգակերտումի գիտությունը: Եւ դարձեալ յանդգնութեամբ պէտք է յայտարարենք, որ բոլոր չքմեղական ճառերը մեզ համար գոնէ կը ծառայեն ծածկելու համար էականը, թէ չուզեցին, չուզեցին եւ ոչ թէ չկրցան: Արտաքին պայմաններու մասին շատ բան կարելի է ըսել, բայց անոնք բոլորը չեն կրնար ժխտել այն, որ մենք գիտենք, այսինքն՝ որ կրնայինք եւ չուզեցինք:

Իսկ այսօրուան տերերը, հայ բոլշեւիկները, որ որքան ալ Մոսկուայի ծառաներն ըլլան, բոլոր աննպաստ պայմաններով պետական, քաղաքական տերմին ունեցող անունով մը – Հայաստան – արժէք մը կը ներկայացնեն, իրենց համաշխարհային լօզունգներուն ուժը այդ տերմինէն միայն կ'առնեն եւ վստահաբար ո՛չ աթոռ պիտի ունենային եւ ո՛չ ալ հաց ու խօսք, եթէ այդ ազգաշէն «ոճրագործությունը» չկատարուէր, այնքան են գիջացած ուղեղով, որ չկրցան եւ չեն ուզեր հասկնալ, թէ այսօրի ազգն ու հայրենիքը այդ միջոցով միայն ստեղծուեցաւ:

Ու անգամ մըն ալ, միլիոնով զոհերու դասերէն յետոյ, քառասուն տարիի արիւնոտ փորձառութիւններէ յետոյ, մենք նորէն ինկած ենք նոյն սխալ ճամբային վրայ, որ ապահովաբար մեզի պիտի արժէ այս ազգին հիմնական բնաջնջումը: Որովհետեւ մեզի համար տարակոյսէ դուրս է, որ Թուրքին Թուրք ազգ կերտելու բացարձակ ու անկախ քայլերուն առջեւ համամարդկային պրօլետարական լօզունգներու մեր ճիգերը ուրիշ ոչինչ են, եթէ ոչ կրկնությունը անցեալ սխալներուն, Հայ ժողովուրդի կոտորածներուն անհատներով պատասխանելու սխալին, որ պիտի քաւեն մնացած հայութեան կոտորածներով ու բնաջնջումով:

Կամ ճիշտ է մեր այս տեսակէտը, որքան ալ ահաւոր ըլլայ ան, կամ սուտ են Թուրքերու գործերը – թողունք այլեւս մինչեւ Քէմալականութեան օրերու փաստերը – Քէմալի քաղաքական-

ութեան արիւնտ ճամբան, անոր գործակալներու տենդագին գործունէութիւնը ափ մը հայութիւնն օղակող թրքական շղթային բոլոր օղակներուն մէջ:

Դժբախտաբար, ճիշտ են ե՛ւ մեր տեսակէտը ե՛ւ Թուրքիոյ գործերը, որոնք ամէն օր մեր աչքերուն առջեւ կը կատարուին:

Իսկ անոնց առջեւ մեր եղկելի ու այլեւս զգուելի վլվլուկները, Թուրքիոյ խրատ տալու մեր գարշելի սփեւտութիւնները չեն կրնար մեր ուսերէն նետել գալիք ոճիրներու մեր պատասխանատուութեան բաժինը, անկախ արտաքին աշխարհի պատասխանատուութենէն:

Պատմութիւններու ընթացքն ու ազգերու օրէնքը փոխելու յաւակնութիւններ բաւականէն աւելի ունեցանք: Բաւական թող ըլլան մեզի գոնէ քառասուն տարիներու ականատեսի փորձառութիւնները, մենք այդ պատմութեան ժամանակակիցներն ենք, գիրքերու մէջ չէ, որ կարդացինք, այլ մեր մարմիններուն վրայ կրեցինք զայն եւ մենք պարտաւոր ենք զայն ըմբռնել այնպէս, ինչպէս որ է:

Եթէ ճամբան ոճիրներով իսկ լեցուն է, այդ մեր մեղքը չէ, պատմութեանն է ու օրէնքինը: Բոլորը քալեր են այդ ճամբայէն, բոլորը կ'ընթանան այդ օրէնքով, մենք չէ, որ պիտի փոխենք զայն:

Որովհետեւ վճիռը տրուած է՝ կամ պիտի ապրինք կամ պիտի մեռնինք:

Ապրելու համար պիտի քալենք ապրողներուն հետ եւ անոնց պէս, այլապէս անխուսափելի է մահը մեզ համար:

Իսկ մեր առօրեայ ճիշերը ուրիշ ոչինչ են, բայց եթէ հոնդիւններ հոգեւարքի մէջ գտնուողի, ապացուցանելու համար, որ մենք դեռ չենք սորված քալել ապրելու գիտութիւնը տիրացողներու պէս եւ կը կոխկոտուինք անոնց ոտքերուն տակ:

Ո՛չ կրկնենք բանալցած ֆրագներ եւ ոչ ալ անոնց մէջ միւսիթարանքներ փնտոենք, թէ ազգ մը բռնի միջոցներով չի կորսուիր:

Ինչպէս ազգ մը կ'ապրի, այնպէս ալ՝ կրնայ մեռնիլ: Միջոցները – բռնի կամ խաղաղ – կրնան զանազանութիւն մտցնել հոգեւարքներու արտայայտութեան մէջ, բայց երկուքն ալ չեն դադրիր միջոց ծառայելէ միեւնոյն նպատակին: Մահը մահ է խաղաղ անկողնի մը մէջ, երբ սիրտը անհրաժեշտ արիւնը անկարող է դրկել ամէն կողմ, կամ երբ գնդակի մը բացած վերքէն ուժգնօրէն բաբախող սիրտը արիւնը ուղխօրէն կը ժայթքէ դուրս ու կը սպառի:

Մեր վարդապետական քարոզները թրքական միջոցներու դէմ ոչ թէ մեր կեանքը կ'ապահովեն, այլ միայն խաղաղ կերպով մեռնելու մեր համամտութիւնը կը յայտարարեն:

Եւ ողբալիօրէն միամիտ ըլլալ ու ոճրագործօրէն տգէտ՝ յայտնելու համար, որ Թուրքին շահը մենք Հայերս աւելի լաւ կը ճանչնանք եւ անոր հանդէպ աւելի անկեղծ ենք, եւ այդ առնուազն վերջին քառասուն տարիներու պատմութենէն յետոյ, ահա այն մեր յետամնացութիւնը, որի պատասխանատուն մենք ենք, անկախ անկէ բղխող հետեւանքներու ընթացքին օտար ու արտաքին դաւերէն ու խարդաւանանքներէն:

Թուրքին դաս տալէ առաջ՝ անկէ դաս առնելու շատ պէտք ունինք ազգ ստեղծելու գիտութեան մէջ:

Ե.

Ազգ կերտելու մեր ճիգերու ձախող վախճաններուն մէջ մեր պատասխանատուութիւնները շա՛տ, շա՛տ են եւ խոր:

Օտար դաւերու մասին խօսիլը այն ատեն միայն իր արժէքը կ'ունենայ, երբ անոնցմով սքօղել չենք ճգնիք մեր պատասխանատուութիւնները:

Բօլշեւիկներն ու Թուրքերը ձեռք ձեռքի տուած մարեցին Հայ ժողովուրդի ազատութեան արշալոյսը:

Այս փաստը բաւական է, որ ոչ ոք չփորձէ մեզ ըսել, թէ մենք կը ժխտենք օլշեւիկներու եւ Թուրքերու սեւ ու հայասպան դարը:

Բայց ինչո՞ւ չյայտարարենք, որ անոնց ծրագիրներու ձեւաւորումի ընթացքին մենք ունեցանք շատ մեղքեր:

Չէ՞ որ Հայաստանը առաջին իսկ օրէն ազատ հռչակեցինք խօսքի ու մամուլի, աւելի՛ քան Չուիցերիան: Չէ՞ որ քաղաքական փախստականներ համարեցինք օլշեւիկները, որոնք իրենց երկիրներէն փախած՝ ապաստան կը գտնէին Հայաստանի մէջ: Չէ՞ որ մենք կը ճանչնայինք հայ օլշեւիկները, որոնք Ռուսաստանէն փախած՝ բայց մեր պաշտօնատուններուն մէջ իսկ, պաշտօն կը ստանային:

Այս բոլոր փաստերը չենք ըսեր ժխտելու համար, թէ հակառակ ատոնց իսկ պիտի կրնայինք խուսափիլ օտար դաւերէն: Բայց պէտք է խոստովանինք, որ այս փաստերը որոշ չափով դիրացուցին ու փութացուցին այն աղէտը, որի մէջ մեր պատասխանատուութեան բաժինը պէտք է վերցնենք:

Մեր կարծիքով Մայիս Մէկը⁵ հազիւ թէ տեղի ունենար, եթէ հայ օլշեւիկներուն թոյլ չի տայինք ո՛չ միայն մտնել մեր պաշտօնատունները, այլ մեր սահմաններէն ներս: Դժբախտ-

⁵ Նկատի ունի 1920թ. բոլշեւիկյան մայիսյան խռովությունը:

արքար, մեր փաստերը օտար դաւադրութիւններու մասին կը փաստեն, որ մենք թոյլ էինք տուած անոնց մտնել մինչեւ իսկ մեր բանակը:

Ահա, այն ինչ որ պետք է խոստովանինք, թէ որքան արդար էինք Մայիս 1-ի ապստամբութիւնը ճնշելու մէջ, նոյնքան մեղաւոր ու պատասխանատու էինք Մայիսն 1-ի ստեղծումը պատրաստուելուն մէջ:

Այս յայտարարութիւնը երբեք չի նշանակեր, որ կը ժխտենք մեր կարելիութիւններէն դուրս ուժերու պատասխանատուութիւնը, այլ մեր կարելիութիւններուն մէջ մեր ունեցած թերացումը, որ եթէ հիմնապէս չէր կրնար իսկ արգիլել դաւաճանութիւնները, բայց կը շեշտէ մեր պատասխանատուութիւնը:

Եթէ չէինք կրնար արգիլել շատ բան դուրսը, շատ դաւ ու դաւաճանութիւն Լոնդոնի, Փարիզի ու Ուաշինգտոնի մէջ, խոստովանինք, որ կրնայինք արգիլել Երեւանի մէջ:

Բայց մենք յանուն «խօսքի ազատութեան» թոյլ կուտայինք, որ քանի մը ժողովրդականներ⁶ Երեւանի մէջ սանձարձակօրէն գրեն ինչ որ կ'ուզեն եւ մինչեւ անգամ կառավարութիւնը «ամէն միջոցով» տապալելու հրաւիրող դաւադրական «եաֆթա»-ներ փակցնեն Երեւանի պատերուն վրայ:

Եւ եթէ վաղը հայ արհմեղադրութեան պատմութիւնը անգամ մըն ալ կրկնուի Հայաստանի մէջ, մեր կարծիքով, որքան ալ մեծ ըլլայ պատասխանատուութիւնը օտարին, աւելի խորարմատ չի կրնար ըլլայ, քան հայ բոլշեւիկներունը, որ թոյլ կուտան թուրք որջացումներն ու դաւերը ափ մը խեղդող ժողովուրդի երակներուն մէջ:

Թուրքը ազգ կազմելու համար «ո՛չ մէկ Հայ» լօգունգով կը քալէ:

⁶ Նկատի ունի ՀՅԴ ընդդիմադիր Հայ ժողովրդական կուսակցութեանը:

Հայր՝ «ընկեր Թուրք» լոգունգով կը պատասխանէ:

Եւ վաղը, երբ արիւնը հոսի կրկին, Ադրբեջանէն, Վրաստանէն, Թուրքիայէն ու Ռուսիայէն առաջ, պատասխանատու է փոշեիկ հայր: Ինչպէս երէկ դաշնակցական հայն էր պատասխանատու փոշեիկ դաւադիրները քաղաքական հալածական համարելուն համար:

«Մենք յիմար չենք – կ'ըսէր օր մը ինձ պատասխանատու փոշեիկ մը – որ թոյլ տանք դաշնակցականներուն երթալ Հայաստան: Որովհետեւ, այդպէտով պիտի կրկնենք անոնց սխալը»:

Այս բառերը իրենց իմաստութիւնը պիտի ունենային, եթէ փոշեիկը նոյնը ընէր Թուրքիին հանդէպ: Հասկնալով վերջապէս, թէ ամէնէն զտարիւն պրօլետար թուրքը աւելի դաւաճան է Հային ու Հայաստանի, քան ամէնէն «հակապրօլետար» դաշնակցականը:

Որքա՞ն բան կայ սորվելիք Թուրքէն:

Եւ եթէ այս ըլլար մեր ճամբան, եթէ պիտի գայինք վերջապէս Սէվրէն Լօզան, վստահաբար չէինք գար Լօզան, մեր ճամբային վրայ առանց գնդակ մը արձակելու Կարսի բերդէն եւ լալկան նամակով մը՝ Լօզանի պալատին դուռը:

Ո՛չ մէկ պրօպատիկը կրնայ սրբել այս քաղաքական բորոտութիւնը Հայ ճակատէն:

Կրնայինք յաղթուիլ: Չենք վիճիր:

Բայց մեր պարտութիւնը յաղթանակէ մը աւելի արժեցնելով:

Այստեղ է ահա, որ երեւան կուգայ մեր պատասխանատուութիւնը, անկախ օտար բոլոր դաւերէն:

Կրնայինք, օր մը, հարկադրուած ըլլալ Լօզան գալու:

Լօզանը կրնայ մեծապէս արդիւնքն ըլլալ օտար դաւերու:

Բայց լալկան նամակով մը Լօզան գալը արդիւնքն է միայն հայ տղամարդութեան ահաւոր բորոտութեան:

Ո՞վ արգիլեց Ահարոնեանին Լօզան գալ ռուբով մը՝ փոխանակ թուղթի կտորի մը:

Կարսի բերդէն գնդակ մը չարձակելու ինտրոյութեան տրամաբանական հետեւանքը եղաւ արցունքոտ թուղթ մը:

Մեծագոյն ողբերգութիւնը այս սիստեմին մէջն է:

Ժորդանիայի մը եւ Ռամիշվիլիի մը դաւին քառութիւնը Եկօրի⁷ մը գնդակին մէջն էր: Ո՞վ կոտորեց նոր Եկօրի մը բազուկը նոյն Կարսի աւելի անպատիւ անկումին առջեւ՝ Երեւանէն մինչեւ Լոզան:

Եթէ Լոզանը չէինք կրնար արգիլել, կրնայինք Լոզանի ոճիրը սրբել:

Շա՞տ յանդուգն է այս յայտարարութիւնը:

Այսպէս կրնան մտածել անոնք միայն, որ աւելի սրբազան յանդգնութիւն ստեղծելու չափ մեծ չեն գտներ հայ արիւնին ծովը:

Իսկ անոնց, որ պիտի կրնան պառաւաբանել, թէ նման քայլեր չեն կրնար վճռել հարցերու ճակատագիրը՝ կը պատասխանենք.- սեւ գիծով մը զծեցէք բոլոր այն դրուագները հերոսական, որոնց հանդէպ մենք գոնէ սրբազան երկիւղածութիւն մը կը պահենք դէտ:

Ըսմէ՞ք փաշայի⁸ մը Լոզան մուտքն ու յաղթական վերադարձը, անկախ օտար դաւերէն, սեւագոյն արատներէն մէկը պիտի մնայ հայ ճակատին:

Լոզանը հայ տղամարդութիւնը փորձի ենթարկեց:

Այն բոլոր կանխազգուշութիւնները, որոնցմով աշխարհը լեցուցին այդ օրերուն, ապացոյց են, թէ օտարներն իսկ կ'ակնկալէին հերոսական տղամարդութիւն մը Հայէն: Եւ մենք հիասթափեցինք զիրենք:

Այստեղ արդէն օտարը պատասխանատու չէ:

⁷ Եգոր Տեր-Մինասյանը 1918թ. սպանեց ՀՀ նախարար Խաչատուր Կարճիկյանին, ով մեղադրվում էր նշյալ վրացիների հետ հայոց շահերը զիջելու մեջ:

⁸ Իսմէթ Ինէնյու (1884-1973): Եղել է Թուրքիայի նախագահ (1938-1950):

Այստեղ Թուրքը պատասխանատու չէ:

Որովհետև, թուրք ոճրագործին դեմ դուրս չեկաւ հայ սրբազան «ոճրագործ»-ը:

Այստեղ է բանալին այն արհամարհանքին, որ կը դիմաւորէ մեզ ամէն տեղ, հակառակ մեր բոլոր աղաղակներուն ու ճիգերուն:

Թո՛ղ չըսուի, որ Լօզանը Լօզան կը մնար կրկին:

Մենք կը պատասխանենք.-

Փաստ չունինք այդ մասին: Իսկ մենք ձեր կարծիքներու սնանկութեան անհամար փաստեր ունինք:

Իսկ եթէ պահ մը չուզենք վիճիլ անգամ այդ կէտի շուրջ, մէկ բան կրնանք ըսել շատ պարզ, այն, որ Լօզանը Լօզան կրնար մնալ, բայց առանց Ըսմէթի ու լօզանեան ոճրագործներու: Եւ այս ո՛չ թէ միայն կը պակսեցնէր արժանաւոր յաջորդ մը Մուսթաֆա Քէմալի, այլ ամբողջ աշխարհի երեսին կը ցցէր հայ հոգիի տղամարդութիւնը:

Թուրք ժողովուրդը, եթէ իր ոճիրներու ճամբան կրցաւ հասցնել մինչև Լօզան իր ոճրապետ Ըսմէթով, Հայ ժողովուրդը իր այնքան արիւններով չկրցաւ Ահարոնեան մը ռմբածիգ դարձնել, այստեղ Հայը այնքան պատասխանատու է, որ օտարներու պատասխանատուութիւնը բերան առնել ամօթ է:

Եւ որքա՞ն շատ են նման փաստերը մեր վերջին տասնեակի կեանքին մէջ, որ հերոսերգութեան դարը կրնային ստեղծել մեզ համար, եթէ «անպատիւ կեանքը պատուաւոր մահէն վեր» լօզունգը չի ներքինացներ հայ հոգին:

Զ.

Ազգերը կը մեռնի՞ն:

Այո՛: Պատմութիւնը վկայ:

Եւ բոլոր ժողովուրդները, որ անհայրենիք են, դատապարտուած են մեռնելու, որովհետեւ եւ առանց հայրենիքի ազգ չի կրնար ըլլալ եւ առանց ազգի հայրենիք չկայ: Երկու երեսները մէկ նիւթի:

Բայց զարմանալի յամատ ինքնախաբէութիւնով Հայ ժողովուրդի քարոզիչները պատմութենէն խօսելու ատեն կը թուեն մեռած ազգերու անունները, անմիջապէս յետոյ կը պնդեն, որ մենք չենք մեռնիր:

Ներքին իմաստը հասկնալի է այս ինքնախաբէութեան: Բայց ալ բաւական է ներքին շատ անգոր խոսքերու մէջ տապալտկիլ, որովհետեւ մահին ճիրանները մենք կը զգանք, իւրաքանչիւրս մեր կոկորդին վրայ:

Այս յամատ ինքնախաբէութիւնը իր ուժը կ'առնէ գլխաւորաբար երկու աղբիւրէ. Ա. որ հայ կեանքը հազարամեաներով կը հաշուրլի, եւ Բ. որ քարացած համոզում մը, չես գիտեր ինչպէս, ունինք, թէ բռնի միջոցներով ազգ մը չի մեռնիր: Երեւի այս համոզումին գլխաւոր պատճառն այն է, որ Հայը բռնի միջոցներու ենթակայ եղած է եւ ուզեր ենք ստեղծել հաւատք մը հակազդելու համար բռնամահութեան փաստի հետեւանքներուն:

Դժբախտաբար այս երկու միտքերն ալ խախուտ են:

Որովհետեւ հազար տարիներ ապրիլը դէռ չապացուցաներ անմահութիւն: Ոչ ալ բռնի միջոցներու մասին մեր ունեցած հաւատքը կը ժխտէ բռնամահութիւնը:

Չերթանք պատմութեան փոշիներուն մէջ քրքրելու մեռնող ազգերու հիւանդութիւններն ու անոնց մահին պատճառը: Որովհետեւ որքան ալ վիճինք ու պատճառներ թուենք, ո՛չ ոք պիտի

կրնայ ժխտել, թե բոլոր պատճառներու շարքին չէ եղած եւ թերեւս ճակատագրականը՝ բռնամահութիւնը:

Հայ ժողովուրդի այսօրի օրինակը բաւական է կարճ քննութեան ենթարկել, որովհետեւ եթէ դարերը փոխուած իսկ են, մահացութեան ախտանիշները նոյնն են:

Որքան ալ տխուր ու զարհուրելի այդ քննութիւնը, մենք պարտաւոր ենք ընել, որովհետեւ քիչ չէ եղած նաեւ չարիքը այն մտայնութեան, որի պատասխանատուն ՄԵՆՔ ենք, որ կարծելով յոյս ներշնչել մահի վտանգին առջեւ գտնուողին՝ չենք տեսեր, թէ անոր մէջ դիմադրական կորովն ենք աղճատեր ու սպաներ: Եւ այս վերջին չարիքը, մեր կարծիքով, մանաւանդ Հայ ազգի պարագային, աւելի մեծ է եղեր միշտ՝ քան յուսահատութեան բարիքը:

Ամէն մէկ հայ անհատ թող քննէ ինքզինքը:

Ազգօրէն մեռա՞ւ բռնախեղդ եւ այսօր կը մեռնի՞ թէ ոչ:

Այսօր ո՛չ Թրքահայաստան կայ եւ ոչ Թրքահայութիւն:

Աշխարհի ամէն կողմերը ցրուած հայութեան մասին, անոր գոյութեան պահպանումին շուրջ ինչ ալ գրենք, ինչ ալ փորձենք՝ անօգուտ է: Ան դատապարտուած է մեռնելու:

Կրկնենք, ինչայելու համար վեճ ու փրօվօկասիօն, թե այս յայտարարութիւնը ժխտումը չէ այդ ուղղութիւնով եղած ճիգերուն, բայց հոչակումն է անոնց շռայլութիւններուն:

Հետզհետեւ արդէն կը զգանք, թէ անբնական են մեր ճիգերը, որ Ամերիկայի, Ֆրանսայի ու մինչեւ անգամ Սիւրիայի մէջ ծնած հայ տղային, որ հայրենիքին քար ու հողէն յիշատակ եւ ուժ չէ քաղեր, հայերէն լեզուն սորվեցնելը դեռ չի նշանակեր անոր քաղաքական հայութիւնը:

Պարտաւոր ենք հաշտուիլ նաեւ, որ այդ ճիգերը արդար ալ չեն, որքան ալ անոնք ունենան զգացականօրէն արդար կողմեր:

Պզտիկ դէպք մը:

Ամերիկայի մէջ, օր մը, հոգեբույժ շէշտով, ինձ հարց կուտար մէկ հայր, մինչեւ ծուծը Հայ մը, պատասխանատու գործերու մէջ ալ գտնուած եւ Դաշնակցական:

«Տղաս լրացուց իր 24 տարիքը, առաւ բարձրագոյն կրթութիւն եւ պիտի հետեւի մասնագիտութեան: Ծանօթ են քեզ իմ Հայի հոգին եւ այն ճիգերը, որ թափած եմ անոր Հայ ըլլալուն համար: Սորվեցուցեր եմ հայերէն գրել կարդալ, տունին մէջ հայերէն խօսիլ: Բայց տասնեակ տարիներու իմ այս ճիգերուն արդիւնքէն տեսեր եմ, որ ան մեռած է Հայութեան համար իբր քաղաքական հայ: Յաճախ հարցուցած եմ սրտատրոփ.

- Գէորգ, երբ Հայաստան երթանք...

- Ես չեմ գար, ընդհատած է զիս առանց ձգելու, որ խօսքս լինցնեմ, ես Ամերիկացի եմ:

Ու արցունքը աչքերուս մէջ երկար մտածած եմ. կրնա՞մ տանիլ զայն Հայաստան, ինչպէ՞ս ... եւ վերջապէս, արդա՞ր է իմ պահանջը:

Եւ գտեր եմ, որ արդար չեմ իմ պահանջներուն մէջ, ո՛չ միայն զինքը Հայաստան տանելու տեսակէտէ, այլ արդար չեմ եղած նոյն իսկ իմ զգացումներուն զոհելու մարդը իմ տղին մէջ: Եւ այս վերջինը ինքը՝ տղաս է, որ զգալ տուաւ ինձ յայտնելով, որ ինք, իբր Ամերիկացի պատրաստութեան մէջ, Ամերիկացի իր ազգակիցներէն պակաս է այնչափով, ինչ չափով, որ հօր ու մօր ստիպումներուն տակ ուժ է վատներ հայերէն սորվելու համար: Հիմա արդէն այլեւս ո՛չ հայերէն կը խօսի, ո՛չ հայերէն կը կարդայ եւ ո՛չ ալ հայ ազգային կեանքով կը հետաքրքրուի: Եւ այսպէս կ'ընէ գիտակցօրէն, կեանքի պայքարին մէջ ուժերը հաւասարեցնելու համար իր ընկերներու ուժերուն: Չուզեր ետ մնալ անոնցմէ ու պարտուիլ եւ ուրեմն ուժերու կեդրոնաձգութեան գիտակցութիւնով յաճախ նոյն իսկ յանդիմանական շէշտով իմ երեսին կուտայ իրեն գործած չարիքս, արգիլելու համար հայ հոգիէս քանի մը թեթեւացումի բառ»:

Կրնանք այս օրինակը ընդհանրացնել:

Եւ որովհետեւ ամէն տեղի մէջ աւելի կամ պակաս շեշտուած կերպով այս է իրողութիւնը – վկայ այլասերումի ու կորուստի շուրջ մեր հանած վիվլուկը – քաջալերական կարգ մը դէպքերը կը մնան միայն բացառութիւններ:

Որքան ալ ծանր ու մահացու ըլլայ այս մեզ համար, փաստը չի փոխուիր: Եւ եթէ քանի մը տարի յաջողինք անգամ մեր բաղձանքները հազցնել փաստերուն, մեր զաւակները պիտի զգացնեն մեզ:

Ու ահա այսպէս ամէն օր պիտի հիւծինք, պիտի մաշինք, եւ պիտի մեռնինք: Ֆրանսայի մէջ քիչ մը արագ, Սիւրիայի մէջ քիչ մը դանդաղ, բայց արդիւնքը նոյնն է:

Ի՞նչ է տարբերութիւնը Ամերիկային եւ Թուրքիային:

Մէկը պէտք չի տեսներ եաթաղանի, որովհետեւ բազում միջոցներ ունի: Եւ մենք այս միջոցներուն առջեւ հաշտուեր ենք մեր մահին, «խաղաղ մահ»-ի միախարանքն ունենալով:

Բայց չմոռնանք, ընդունէր ենք, որ կը մեռնինք:

Միւսը չունի Ամերիկացիին միջոցները, կուլտուրան, եւ սակայն, Ամերիկացիին պէս գիտակ ազգ ստեղծելու գիտութեան, իր չունեցած կուլտուրան կը փոխարինէ եաթաղանով, արհամարհելով «ոճրագործ» տիտղոսը: Եւ մենք աղէտալի մտայնութիւնով կը յամառինք պնդել, թէ չենք մեռնիր. «բռնի միջոցներով ազգ մը չի մեռնիր»ի միախարանքը հռնդալով:

Փաստն այն է, որ մեռանք եւ միլիոնով մեռանք եւ մեր պնդումը այս ազգաջնջումին առջեւ երբեք չի փոխեր ահաւոր փաստը:

Ապրիլ ուզելու ճիգն ալ բաւական չէ դեռ ապրելու համար՝ պէտք է ապրիլ գիտնալու գիտութիւնն ունենալ:

Հասկնալի է՝ մեր խօսքը ազգ ու հայրենիք ապրելու մասին է եւ ահա այդ գիտութեան մէջ Թուրքերը դարաւոր պաշար ունին

Եւ նոր Թուրքերը անհամեմատ աւելի ընդունակ են, քան Հայը եղած է եւ պիտի կրնայ ըլլալ, եթէ յամառի կառչիլ հին ճամբային:

Չի բացատրենք պատճառները՝ անոնք չեն փոխեր փաստը:

Գոնէ տեսնել ստրվէինք փաստը, թէ ինչպէ՞ս Թուրքը ազգ ու հայրենիք կը ստեղծէ եւ ինչպէ՞ս մենք կը մեռնինք իբր ազգ ու հայրենիք, որովհետեւ եթէ այդ մեր հայրերու դիակները չպիտի կենդանացնէ, բայց պիտի ապրեցնէ մեր գաւակները:

Եւ եթէ անգամ մը ճանչնայինք ինքզինքնիս ու ընդունէինք Թուրքին աւելի շիտակ ուղին ազգակերտումի գործին մէջ, որ այսօր ալ դեռ կ'իյնայ մեր կարելիութեան ու պատասխանատուութեան սահմանին մէջ, պիտի գտնէինք նաեւ, թէ արտաքին շատ մը դաւերն ու խարդաւանանքները հետեւանքներն են մեր մէջ գտնուած պատճառներուն:

Այլեւս շատ բաներու մէջ չպիտի հարցնէինք. ինչո՞ւ Անգլիան, Ֆրանսան Թուրքը կը պաշտպանեն կամ ուրիշներ Թուրքին կ'օգնեն:

Վերջապէս, հասկնանք, որ ամէն բանի մէջ օրէնք մը կայ, եթէ նոյն իսկ արդարութիւն մը չըլլայ, կարողութիւն մը, արժանիք մը կա՞յ, որ օտարները կը գնահատեն: Գիտնանք, վերջապէս, թէ քաղաքական կեանքի մէջ օրէնքն է դեկավարտը եւ մոռնանք արդարութիւնը: Որովհետեւ վերջապէս արդարութիւն ըսուածն ալ յարաբերական մէկ բառ է՝ ինչ որ արդար չէ մեզ համար, արդար է ուրիշին համար:

Դառն է մեզ համար այս գիտութեան գոյութիւնը: Բայց ի՞նչ ընենք, որ Սուլթան Համիտ հարիւր հազարով կոտորելով, շրջանները այլասերելով ու լեզուները փոխելով, իսկ նոր Թուրքերը միլիոնով կոտորելով եւ յաջորդական քայլերով ստեղծեցին Թուրք ազգը եւ ապացուցին, որ շատ աւելի լաւ գիտեն ազգ կերտելու գիտութիւնը: Դառն է, շատ դառն, որ քսաներորդ դարը,

գերազանցապէս ազգակերտումի այս դարը, աւելի քան շեշտուած կերպով հռչակեց «իմ կենաքը ուրիշի մահին մէջ»ը: Ու մենք առաջին շարքին վրայ ենք մահապարտներուն՝ կէանք տալու համար ուրիշին:

Կը տեսնենք այս վճիռը ամէն օր ու տակաւին կը յամառինք չըմբռնել: Դեռ կը վախնանք խօսիլ անոր մասին եւ յաւակնոտ դպրոցականի պէս՝ կը յամառինք Թուրքէն բան սորվելու փորձը չընել:

Մանկամտօրէն քար կը նետենք Թուրք ծառի տերեւներուն, երբ ան Հայ ծառին բունը կը կացնահարէ: Եւ կը յայտարարենք, որ Թուրքը կը մեռնի, իսկ Հայը կ'ապրի:

Ինչո՞ւ, ուրեմն, այնքան լաց ու ողբ, ինչո՞ւ այնքան վլվլուկ ու մեղադրանք օտարներուն դէմ: Ի՞նչ յաւակնութիւն այլեւս ո՛չ միայն Թուրքին, այլ մինչեւ իսկ Անգլիացիին քաղաքական դասեր տալու, եթէ բռնութիւնով ազգ չի մեռնիր եւ մեր մէջ է ապրելու գաղտնիքին բանալին:

Աւա՛ղ սակայն, որ ազգերը կը մեռնին:

Երէկ շատեր մեռան, այսօր ալ մենք կը մեռնինք:

Եւ կը մեռնինք ոչ թէ որովհետեւ պզտիկ ենք, այլ որովհետեւ ազգ կերտելու գիտութեան մէջ ահաւորօրէն տգէտ ենք:

Այստեղ ալ դարձեալ Հայն ունի մեծ պատասխանատուութիւն, անկախ օտարներու բաժինէն, պատասխանատուութիւն քառասուն տարիներու Հայ ազգի մահացումէն ու թուրք ազգի ստեղծումէն բան չսորվելու:

Է.

Թուրքը ա՞զգ է թէ ոչ:

Ատելութեան ու վրէժի ո՛չ մէկ անսահմանութիւն, բացի բացարձակ ապուշութենէ, կրնայ չընդունիլ, որ Թուրքը իր գոյութեան ամբողջ ընթացքին այնպէս դիմագիծ ունեցող ազգ էր, ինչպէս այսօր:

Եւ հակառակ մեր բոլոր բաղձանքներուն ու ստատիստիկներուն, հակառակ հողային այնքան ընդարձակ տարածութիւններու կորուստին, Թուրքը այսօր է միայն, որ ազգ է: Ընդունինք, որ առանց Օսմանեան Կայսրութեան արհեստաւորութեան, առետրականութեան, հողագործութեան, հարստութեան, այսօր ինքն իր իւրին մէջ տապկուելու յանձնառու, Պոլիսը լքող եւ Անկօրայով բաւականացող Թուրքն աւելի ազգ է, քան երբեք եղած էր:

Ինչպէ՞ս եղաւ:

Պատասխանը գիտենք բոլոր հայերս ալ:

Ամէնէն առաջ ու ամէնէն շատ կոտորելով, յետոյ փորձելով լուծել փոքրամասնութիւնները:

Երէկ փորձեցին լուծել, թրքացնել լեզուով ու հոգեբանութիւնով: Պզտիկ եղաւ յաջողութիւնը, որովհետեւ այն ստեն մեծ էր պատառը եւ թուրք ստամոքսը դեռ անվարժ մարսելու: Բայց ուրանալ բոլորովին անոնց յաջողութիւնը, պիտի նշանակէր չի հասկնալ մեր անօգուտ ճիգերն ու ճիչերը չորս հովերուն տարտղնուած հայերու թրքախօսութեան դէմ: Եւ եթէ սրտառուչ սարսուռներ կ'ունենանք նմոյշներու առջեւ, որ լեզուն կորսնցնելով մէկտեղ պահեր են դեռ հայ հոգին, խոստովանինք, որ մեծ է բազմութիւնը լեզուին հետ հոգին ալ կորսնցնողներուն:

Եւ ահա ազգ կերտելու գիտութիւնով զինուած՝ թուրք ուղեղը, անկախ արտաքին բոլոր օժանդակութիւններէն ու խորհուրդներէն (որովհետեւ արտաքին օժանդակութիւններէն օգտուիլն ալ կարողութիւն մըն է) ջախջախեց ոսկորները

անմարսելի եւ այսօր կը փորձէ մարսել միսերը: Հակառակ բոլոր յոռետեսութիւններուն, թէ «թրքերէն խօսէ, թրքացիր» ազդարար-
ութիւններն ու ճիգերը պիտի ձախողին, մեր կարծիքով, պիտի
յաջողին: Ճիշտ է, որ կոպիտ միջոցները կիրք ու բեկասիօն պիտի
ստեղծեն, բայց վերջնական յաջողութիւնը Թուրքերուն պիտի
մնայ: Ու հեռու չէ այն օրը, որ նոյն իսկ մեր աչքերով տեսնենք
այս ճիգերուն արդիւնքները, որ ո՛չ միայն թրքերէն խօսին, այլ
Թուրքի պէս մտածեն ու զգան:

Իսկ մեր ճիգէ՞րը:

Կրկնենք դարձեալ, անոնք նման են այն տղաներու ճիգե-
րուն, որ ծառերու տերեւները կը քարտտեն, երբ իրենց բունը կը
կացնահարուի: Այս գետնին վրայ ալ մեր բոլոր ճառերն ու
ժողովները, առանց ժխտելու անոնց արժէքը, վերջ ի վերջոյ
ժամանակաւոր զբաղումէ մը անդին չպիտի անցնին:

Եւ վերջապէս, եթէ մեր ճիգերը իսկապէս ազգային քաղաք-
ական արժէք պէտք է ունենան, ի՞նչ արժէք ունին անոնք, որ
արմատախիլ եղած՝ թրքերէն չեն խօսիր, բայց անգլիերէն,
ֆրանսերէն կամ գերմաներէն կը խօսին, հայերէն չեն խօսիր ու
Հայի պէս չեն զգար: Արժէ՞ր այնքան վատնում միայն անոր
համար, որ մէկը թրքերէն չխօսի, բայց հայերէն ալ չխօսի:

Մեզ համար ատելութիւնը ատելութեան համար իսկ արժէք
մըն է: Բայց դժբախտաբար մենք չենք տեսներ, որ հիմնաւոր է
մեր այս ճիգերէն գոնէ լեզուին փոխարէն այդ սրբազան ատել-
ութիւնը ստանալ: Չենք տեսներ, որ ֆրանսերէն ու անգլիերէն
խօսող հայեր շատ աւելի նուազ Հայ են, քան թրքախօս հայեր առ
հասարակ:

Չենք կարծեր, որ ոեւէ մէկը յաւակնի Ֆրանսիայի մէջ
գտնուող Հային միայն մէկ տասնեակ տարի յետոյ ֆրանսերէն
լեզուին փոխարէն հայերէնը խօսիլ տալ:

Ու երեւակայել որ, ուրեմն, մեր այս ճիգերը միայն «խաղաղ
ու անգիտակից» մահի մը համար են վերջ ի վերջոյ: Որովհետեւ,

որքան ալ ափսոսանքի խօսքեր կ'ընենք, բայց հաշտուած ենք անոր հետ ու վրդովմունք մը չերելիր մեր մէջ: Բնագործէն գիտենք, թէ վրդովուիինք ալ՝ օգուտ չունի:

Մահ գիտացեալ անմահութիւն է՝

Եւ այս ցնցող ու պաղ իրականութիւնը համարձակօրէն պարզելու մեր նպատակն է միայն այն, որ աւելորդ վատնումները խնայուին «գիտացեալ մահ»ի ոգորումներուն, որովհետեւ անմահութիւնը այդ ոգորումներուն մէջ է եւ մենք չպիտի կրնանք երբեք մեր ոգորումները օգտագործել շիտակ ճակատին վրայ, քանի այսպէս ցրուած մնան մեր ուժերը:

Թուրքը իր ուժերը կեդրոնացուցած է իրական գործին վրայ, իսկ մենք զբաղումի սահմանին մէջ սահմանափակուելիք բաները դարձուցեր ենք մեր գործը:

Եւ այստեղ ալ ճակատագրուած ենք մահացուօրէն պարտուելու:

Թուրքը իր բիւտճէին մեծագոյնը ներքին նախարարութեան կը յատկացնէ. այսինքն՝ ազգը ստեղծելուն, որ կը նշանակէ օտարին գերեզմանը փորելուն:

Հայը իր չունեցածը կը սպառէ ամէն բանի վրայ, բացի ինքնապաշտպանութեան խրամ մը իսկ փորելու:

Ու երբ Թուրքը ազգ կը դառնայ, միայն օտարը կը տեսնենք: Երբ Հայը կը մեռնի, դարձեալ միայն օտարը կը տեսնենք:

Որ օտարը կայ երկու պարագային ալ՝ չենք վիճիր:

Չվիճինք նաեւ, որ կան Թուրքը եւ Հայը: Եւ կայ մանաւանդ երկուքին հսկայ տարբերութիւնը ազգ ստեղծելու սիստեմին մէջ:

Կրնայի՞նք երէկ թրքահայերս, երբ որքան ալ պետական կեանքէ զուրկ, բայց մեր հողէն ու քարէն բոլիսած ուժով ազգի դիմագիծ ստանալ:

Այո՛, եւ հազար անգամ այո՛:

Կրնա՞նք դեռ այսօր իսկ, այս տարտղնուած վիճակով ազգի դիմագիծ ստանալու ձգտիլ:

Այո՛, բայց միայն արիւնն ու կոտորածը իր աչքերով տեսնող սերունդին շրջանին միայն:

Ահա այն ինչ որ չըմբռնեցինք, չենք ըմբռներ, ահաւորագոյնը, չենք ուզեր ըմբռնելով շարժիլ:

Այսքան տարագիր ու անհայրենիք հայութեան համար:

Բարեբաղդաբար, կայ ափ մը հայութիւն դեռ եւս, որ կենսատու հողի մը վրայ է եւ բնականօրէն այդ հողէն կը ստանայ դիմագիծ:

Ի՛նչ կ'ուզէ այն թող ըլլայ գոյնը այն հողին, որ Հայաստան կը կոչուի. բաւական է, որ այնտեղ հայկական քանակ մը կայ:

Լեզուն աղճատուած, բարքերը բռնաբարուած, գոյնը անհարազատ... Բայց միակ տեղը, ուր, սակայն, ոճրագործ հայն անգամ քաղաքականօրէն ռեւէ արժէք մըն է:

Տխուր է, բայց ազգային-պետական հասկացողութեան վճիռն է այս:

Կարելի՞ է ժխտել, որ ոճրագործ, համմալ թուրքը պետական միտքով քաղաքացի մըն է եւ քաղաքականօրէն աւելի մեծ արժէք մը, քան ցրցքնուած հայ մէկ տաղանդ:

Ահա թէ ինչո՛ւ համար այդ հողի շերտին ու անոր վրայ լլկուած հայ բազմութեան վրայ միայն կրնանք նայիլ որպէս ազգի:

Բայց ի՞նչ է պատկերը այնտեղ:

Հոն ալ նոյն տգիտութիւնը ազգ ստեղծելու մասին: Թուրքիայի մէջ Թուրքը կը շատնայ, կը շեշտուի, Հայը վերջացած է, Հայաստանի մէջ Հայը կը քիչնայ, կը տարտամնայ, իսկ թրքութիւնը կ'ամրանայ: Մտային գիշութեան մէկ խառնարան: Եղբայրութեան, մարդկայնութեան մէկ պոռնկանոց դարձաւ այդ քամբաղդ հողը, ուր ազատութիւնը լրտեսութիւն պտտցուց

մինչեւ ռազմաճակատները եւ դավարիշուփիւնը⁹ մէհմէտճիկներ կը սնուցանէ Հայի արիւնով:

Ու վաղը, երբ կերտուած Թուրք ազգը այդ ափ մը հայութիւնն ալ թաղէ, ազատուող ջէնտըլմէններ ու դավարիշներ նորէն օտարին պիտի հայհոյեն. կարծես օտարին մէկ մազն անգամ կը խտրտի այդ բոլորէն:

Ապա մեր պատասխանատուփ⁰ւնը:

Չէ՛, հայը ինչպէ՛ս կրնայ մեղք ու պատասխանատուփիւն ունենալ: Բոլոր մեղքը օտարինն է:

Եւ ի՞նչ ճառեր եղբայրութեան, ի՞նչ գուրգուրանք բարեկամութեան, թուրք-հայ համերաշխութեան...

Այո՛, այսպէս կը վերջանան ոյն ու արիւնհեղութիւնները. Թուրքը Հային եղբայրն է:

Քիչ մըն ալ պէտք է քաղաքագէտ ըլլալ: Պէտք է նոյն իսկ ցոյց չտալ, բարեկամ ձեւանալ, խաբել Թուրքը:

Առաջիկաները այլասերած ուղեղներն են:

Երկրորդները քաղաքագէտները:

Ու կը հաւատա՞ն, կը հաւատա՞ն իրենք իրենց, որ աւելի խորամանկ են, աւելի խորագէտ եւ քաղաքագէտ, քան Թուրքը, մինչեւ զայն խաբելու աստիճան:

Այս յաւակնութեան մէ՞ջ ալ օտարն է պատասխանատու:

⁹ Ռուսերէն «ընկեր» բառն է:

Ը.

Թուրք-հայ բարեկամութիւն մը կարե՞լի է:

Այսօր Ո՛Չ:

Եւ ով որ հակառակը կը պնդէ՝ կամ Թուրքը չի ճանչնար կամ ինքզինքը: Աւելի ճիշտ՝ ո՛չ Թուրքը կը ճանչնայ, ո՛չ ինքզինքը:

Դժբաղդաբար, սակայն, պակաս չեն հայեր, որոնք Թուրքը բարեկամօրէն խաբելու յաւակնոտ քաղաքագիտութիւնով՝ ե՛ւ կը մտածեն ե՛ւ կը գործեն այդ ուղղութիւնով:

Եթէ ուրիշ ոչինչ չունենային հայ բօլշեփիկները, միայն այն ոճիրը, որ գործեցին Թուրքերու հետ միանալով՝ հայ արիւններու մէջ թաթխեցին իրենց ձեռքերը, եւ կը գործեն այսօր յանուն թուրք բարեկամութեան ազգաքանդօրէն, բաւական էր, որ անոնք ազգակերտումի գործին դաւաճաններն համարուէին:

Հաւատալ, թէ Թուրքին հետ բարեկամութիւնով կարելի է փրկուիլ, յաւակնիլ թուրք-հայ բարեկամական քաղաքագիտութիւնով խաբել Թուրքը, անորակելի մէկ նոր ոճիր է, որ պիտի քաւենք ազգին մահով:

Բայց հայ բօլշեփիկները չեն միակ այդ յաւակնոտները: Ամէն գոյնի մարդեր, ամէն տեղի մէջ, պատուելիներէն մինչեւ Դաշնակցականներ, Պոլսէն մինչեւ Ամերիկա, մենք կը հանդիպինք նման յաւակնոտներու, որ կը կարծեն, թէ իրենք աւելի քաղաքագետ են եւ աւելի խորամանկ, քան Թուրքը եւ այդ գետնի վրայ կրնան պարտութեան մատնել զայն:

Բօլշեփիկներուն ու երկրորդներուն միջեւ թուրք-հայ բարեկամութեան սկզբունքին մէջ, ըստ էութեան, չկայ տարբերութիւն: Տարբերութիւններէն մէկն այն է, որ երկու կողմին մէջ վեճի մը պարագային, ի նպաստ բօլշեփիկներուն, որ անոնք կրնան ըսել «նման քաղաքականութեան մը հետեւանքները պիտի կրենք

մենք ալ անձնապէս Հայ ժողովուրդին հետ, գտնուելով աղէտի շրջանին մէջ»:

Մեզ չպիտի հետաքրքրէր անհատներու կրած կամ կրելիք աղէտը, մանաւանդ անոնց, որ Թուրքի եաթաղանին համը չեն առած եւ կ'ուզեն առնել, եթէ այդ աղէտը սահմանափակուէր միայն պատասխանատուներուն վրայ: Բայց, դժբաղդաբար, փաստն այն է, որ յաճախ պատասխանատուները կը խուսափին, իսկ ժողովուրդը մշտական ու անխուսափելի գոհը կը դառնայ:

Մեր կարծիքով, թուրք-հայ բարեկամութեան մը մէջ յոյս տեսնողները գիտակցօրէն ու անգիտակցօրէն թշնամի են հայութեան: Եւ վաղը այսպիսի քայլէ մը առաջ գալիք նոր արիւններու պատասխանատուութիւնը, անկախ արտաքին դաւերէն, ամէնէն առաջ կ'իյնայ Հային վրայ:

Բօլշէւիկ հայը այնքան խանդավառուած է «ընկեր» Քէմալ-ճիկով, որ չի տեսներ, թէ իր ծոցին մէջ ինչեր կը կատարուին իր կեանքին դէմ: Իսկ ներքին դաւադրութիւնները մեզի կը հրամցնէ խաղաղ ու եղբայրական կեցութեան պիտակով:

Ան բարեկամ է թուրք պրօլետարին՝ դաւանանքով, որ գոհը կը համարէ դասակարգային բռնատիրութեան:

Ան բարեկամ է Քէմալին՝ քաղաքագիտօրէն, որքան ալ դասակարգային միտքով թշնամի նկատէ, կը յաւակնի գայն խաբել:

Ի՞նչ կը մտածէ արտասահմանի հայութիւնը, որ նոյն քաղաքականութեան կողմնակից է:

Դաւանանքով, ըստ էութեան, նոյն հաւատքն ունի թուրք պրօլետարի մասին: Միայն թէ կը վախնայ թուրք անունը բերան առնել, պրօլետարներու շահերը պաշտպանելու ատեն: Այս վախը ինքնին բաւական է ապացուցանելու, թէ նմաններ հարազատ արտայայտիչները չեն անոնց, որ Թուրքը լաւ կը ճանչնան:

Քաղաքագիտօրէն նոյն յաւակնութիւնն ունի, թէ կրնայ խաբել Թուրքը: Այստեղ ալ դարձեալ վախկոտ է ան, որովհետեւ

կը խուսափի թուրքին անունը տալէ եւ կը ծածկուի «Կովկասեան ժողովուրդներու կօմիտէ» անունին տակ: Գիտէ, որ այդ կօմիտէն քէմալական կօմիտէ մըն է, անոր վարիչները նոյն մարդերն են, հայակեր, որոնք ուղղակի կը խօսին քօլշէիկիին հետ եւ անուղղակի կը բանակցին ոչ-քօլշէիկիին, հակաքօլշէիկիին հետ:

Ուրեմն, սկզբունքի եւ նոյն իսկ գործելակերպի մէջ այս հարցին շուրջ տարբերութիւն չկայ:

Տարբերութիւնը մեր եւ այդ մտածողութեան ներկայացուցչութեան միջեւ է, որովհետեւ մենք ո՛չ կը հաւատանք Թուրքի ռեւէ բարեկամութեան՝ դաւանանքով, ո՛չ ալ կը յաւակնինք Թուրքը խաբելու կարողութիւնն ունենալ: Հետեւաբար, երկու կողմն ալ, այս հարցին մէջ, թշնամի կը համարենք հայութեան: Այն տարբերութիւնով, որ մէկը կը տեսնենք լիրբ համարձակութեան մէջ, իսկ միւսը՝ վախկոտ վատութեան դիմակով:

Ու կը համարձակինք հարցնել.-

Եթէ թուրք-հայ բարեկամութիւն մը կրնայ փրկել հայ կեանքը եւ անոր խաղաղութիւն տալ, ան աւելիովը կիրարկուած է արդէն քօլշէիկներու միջոցով, պաշտօնապէս, պետականօրէն, ռուսական կնիքով վաւերացուած: Ինչո՞ւ այլեւս նոյն փորձը ուրիշ գիծով: Աւելի երաշխի՞ք տալու համար Թուրքին մեր անկեղծութեան մասին, թէ խաչաձեւելու համար նոյն դաւանանքը:

Կայ, սակայն, մէկ ահաւոր իրողութիւն այս երկճղի գիծին մէջ, նոյն թուրք բարեկամութեան շուրջ:

Քօլշէիկը կ'ընդունի Թուրքին բարեկամութիւնը Հայաստանը Ռուսին հովանիի տակ:

Ոչ-քօլշէիկը կ'ուզէ Թուրքին բարեկամութիւնը Հայաստանը Թուրքին հովանիի տակ:

«Կովկասեան ժողովուրդներ» բառերը խաբեբայութիւններ են միայն Հայ ժողովուրդը խաբելու: Եւ այս գետնին վրայ գործուած ռճիրը անուն չունի:

Կը նշանակէ վերջիններու տեսակետով Թուրքը աւելի անկեղծ է իր բարեկամութեան մէջ դէպի Հայը, քան Ռուսը, աւելի ճիշտ՝ նուազ կեղծաւոր է, քան Ռուսը:

Կը նշանակէ նոյն թուրք բարեկամութիւնը վաղը. օ՞ այդ նախճիրի օրը, երբ գայ բացարձակ թրքութիւնով, Հայաստանն ու Հայը աւելի խաղաղ ու բարգաւաճ պիտի ըլլան, քան այսօր:

Կը նշանակէ, առնուազն, իբր պատասխան «Կովկասեան ժողովուրդներ» խաբէութեան, որ վաղը Ատրբեջանցի ու Դաղստանցի Թուրքը եւ Վրացին աւելի պիտի պաշտպանեն Հայը՝ յանուն թրքական բարեկամութեան:

Կամ այո՛, կամ ո՛չ:

Իսկ մենք, որ շատ լաւ, հարիւր անգամ աւելի, մեր արիւնին ամէն մէկ կաթիլով ու սերնդականօրէն կը ճանչնանք Թուրքը, կը յայտարարենք համարձակօրէն, թէ թուրք-հայ բարեկամութիւն չկայ, չկայ, չկայ: Չկայ, որովհետեւ եթէ այդ բարեկամութիւնը Հային կեանք պիտի տայ, մահ պիտի տայ Թուրքին: Այս բանը Թուրքը մեզմէ չպիտի սորվի: Եւ անբնական է, որ մէկը յանուն ոեւէ բարեկամութեան իր մահով կեանք ուզէ ուրիշի մը, մանաւանդ թշնամիին: Իսկ եթէ ան կեանք պիտի տայ Թուրքին, մահ պիտի տայ մեզի՝ Հային: Եւ ան կեանք պիտի տայ Թուրքին: Ահա ինչ որ մենք մեր երէկի մահերով ու այսօրի հոգեւարքներով հասկցեր ենք, սորվեր ենք Թուրքէն, բայց թուրք-հայ բարեկամութեան քաղաքագէտները չեն հասկցեր եւ կը փորձեն հասկնալ հայութեան վերջնական բնաջնջումով:

Մեր բացարձակ համոզումն է, որ թուրք-հայ բարեկամութիւնը, ե՛ւ բօլշեւիկեան ե՛ւ հակաբօլշեւիկեան ճամբաներով կը յանգի հայկական դժոխքի:

Եւ աւելին կ'աղաղակենք այս ազգաքանդ տգիտութեան երեսին, որ հայ բօլշեւիկը թրքական գործակալ է, կարմիր քօղով ծածկած իր անպատկառ դէմքը, իսկ ոչ-բօլշեւիկ կամ հակա-

բօլշևիկ հայր, նոյն քաղաքականութեան պաշտպան, տարբեր բան մը չէ վրացական լաջակը՝ վախկոտ գլխին:

Գիտակից թէ անգիտակից: Փաստը չի փոխուիր: Իսկ այս քաղաքականութեան գործած ու գործելիք ոճիրներուն ո՛չ արդարացում կայ, ո՛չ չքմեղանք:

Թուրք-հայ յարաբերութիւններու կնճիռներ լուծող հայ ուղեղներ անգամ դեռ նոր ու սարսափահար սկսան տեսնել յիսուն տարիներու թրքական հիւսուած ցանցը եւ աչքերը կը գոցեն չտեսնելու համար անոր ահաւորութիւնը: Եւ հայկական այս աղետաւոր տգիտութիւնով ելնել ու յաւակնիլ խաբել Թուրքը, անկէ աւելի դիպլօմատ դուրս գալու հովեր առնել, անորակելիօրէն ծիծաղելի պիտի ըլլար, եթէ դժոխօրէն եղերական չըլլար:

Եւ վերջապէս, ինչո՞ւ այլեւս չթօթափել այս յաւակնութիւնը եւ չընդունիլ, որ քաղաքականութեան գետնին վրայ Թուրքերը շա՛տ շատ առաջ են մենէ:

Յանցանքը մերը չէ, որ ամչնանք: Բայց ամչնանք, որ խաբէութիւն կը փորձենք:

Քաղաքագիտութիւնը գիտութիւն մըն է աւելի նուրբ, քան ոեւէ գիտութիւն, եւ անոր համալսարանը պետական կեանքն է:

Դարերով այդ համալսարանին մէջ մինչեւ արիւնը փորձուած Թուրքը համարել աւելի տգէտ, քան Հայը, այդ գետնի վրայ յաւակնիլ անոր հետ գլուխ ելնել, պիտի նմանէր այն գրել կարդալ չգիտցող հովիւին, որ լեզուագէտ բանասէրի մը ստուգաբանութեան դասեր տար:

Եթէ մինչեւ այսօր չենք հասկցեր, թէ թուրք գիւղապետը աւելի քաղաքագէտ է, քան հայ մեծագոյն տիպլօմատը, միայն անոր համար, որ պետական կեանքը անկախօրէն, առանց անոր գիտակցութեան իսկ կաղապարեր է գայն, եւ քաղաքականութեան (իմա՛ խաբէբայութեան) մէջ մեր տգիտութեան ու յետա-

մնացութեան մեղքը միշտ օտարի դաւին մէջ ենք թաղեր, այսօր գոնէ եթէ գիտակցեինք, պիտի շահեինք մէկ շատ էական բան: - Մեր դարաւոր արինին դասը պիտի ըմբռնեինք: Եւ այդ դասը որոշ չափով պիտի լրացնէր մեր կամքէն անկախ քաղաքագիտական պակասը:

Ու հետեւանքը պիտի ըլլար այն, որ թուրք բարեկամութեան մէջ պիտի տեսնեինք մեր ստոյգ մահը, պիտի խուսափեինք այդ բարեկամութենէն, որի միակ ու ապացուցուած յատկանիշն է շղթայել Հային ձեռքը, բանտել ու կացնահարել, եւ վերջապէս պիտի մղուէինք գտնել միջոցը ապրելու, մինչեւ որ օր մը քաղաքագէտ դառնայինք:

Կարելի է Հային համար քաղաքագիտութեան փորձեր կատարել ոեւէ մէկին հետ, միշտ խաբելու անխուսափելի պայմանով անգամ, բայց ո՛չ Թուրքին հետ:

Առաջինը մեզ կրնայ խաբուողի կսկիծներ տալ, բայց ստրվեցնել մէկ շատ մեծ իմաստութիւն – որքան յոյս դնես ուրիշին վրայ՝ այնքան քիչ է անոր պատասխանատուութեան մասին քու իրաւունքը, որքան քիչ՝ այնքան շատ է քու իրաւունքը:

Երկրորդը մեզի միայն մահ կը բերէ:

Թ.

Օտարին մեղքն ու պատասխանատուութիւնը ժխտած չենք ըլլար երբեք, մեր աղէտներուն մէջ, եթէ կրկնենք ու երեքնենք, որ որքան շատ յոյս դնենք օտարին վրայ, ով կ'ուզէ ըլլայ այդ օտարը, այնքան քիչ կ'ըլլայ մեր իրաւունքը օտարի պատասխանատուութեան մասին խօսելու եւ ընդհակառակը:

Ահա այս շատ էական սկզբունքին մէջ է, որ Թուրքերը շատ աւելի խելացի են, քան Հայերը: Եւ այս սկզբունքի կիրարկումը եղած է անոնց յաղթանակին պատճառներէն մէկը, ինչպէս նաեւ մեր պարտութեան:

Որովհետեւ ան, անկախ բոլոր ուրիշ աղաղակներէ, ո՛չ միայն արտաքին աշխարհի աչքին արժէք մը դարձուցեր է Թուրքը, այլ նաեւ կարող դարձուցեր է թուրք արգանդը Մուսթաֆա Քէմալներ ծնելու:

Կարելի՞ է համեմատել երբեւիցէ թուրք մեծագոյն աղէտն անգամ հայ փոքրագոյն մէկ աղէտին հետ: Բայց փաստն այն է, որ ան կրցաւ ծնիլ Քէմալ մը, որ ազգ մը ստեղծեց:

Դեռ չենք ուզեր տարակուսիլ հայ արգանդի բեղմնաւորութեան վրայ, որովհետեւ նման տարակոյս մը ոչ միայն պիտի ըլլար ժխտումը տառապանքի աստուածստեղծ ուժին, որ Հայն ունեցաւ եւ ունի, այլ նաեւ գոյութիւնը դիցարիւն հերոսներուն, որոնց շարքը պատիւ պիտի բերէր ռեւէ ազգի:

Անդրանիկ մը երբեք նուազ հերոս մը չէր, քան Քէմալ մը: Բայց մէկը, երբ դարձաւ դազի, միւսը մենք, հայերս, զարկինք քարէ քար: Անոր դագաղին շուրջ ցոյց տրուած երկիւղածութիւնը, եթէ արժանօրէն կը վայելէր անոր մեծութեան, չտեսանք, թէ ան կ'ապացուցանէր նաեւ Հային ոճրագործ յետամնացութիւնը:

Անդրանիկը չմեռաւ՝ մենք սպաննեցինք զայն:

Այս էր, որ կը պատասխանէր անոր դագաղը, բայց մեր ազգաստեղծութիւնը այնքան բութ է ու խուլ, որ չլսեցինք:

Ըսենք աւելին, Անդրանիկ ինքն ալ իր կարգին, իբր հայ, չտեսաւ, որ պիտի սպաննուէր օր մը, այն օրէն, որ իր զինուորը հրացանի կը բռնէր Թուրք կոտորելուն համար, երբ Քէմալականները կը շքագարդէին Հայ կոտորող իրենց զինուորներուն կուրծքը:

Օրէնքն իր վճիռը ունի:

Եւ այդ օրէնքը ճանչնալու մէջ Հայը ետ է Թուրքէն ու Անդրանիկը՝ Քէմալէն:

Որքան ալ շատ ըլլան օտար դուերն ու պատասխանատուութիւնները, որքան ալ բեղմնաւոր ըլլայ ու հերոսածին հայ արգանդը, մենք պիտի պարտուինք ու պարտուեցանք, որովհետեւ չէինք ճանչնար այդ օրէնքը:

Վախցանք, որ օտարը մեզ գագան կ'անուանէ: Թուրքը չվախցաւ այդպիսի բառերէ, որոնց արժէքը կշռած է:

Աղօթեցինք միշտ կրկնելով. «Սուր առնողը սուրով կ'իյնայ»: Թուրքը իր Ալլահը դիմաւորեց սուրը միշտ մերկ ու արիւնաներկ:

Ու շարեցէք...

Ասոնք բոլորը արտայայտութիւններն են օրէնքը ըմբռնելու կամ անգիտանալու:

Ի՞նչ կ'ընենք այսօր ապացուցանելու համար, որ գոնէ այսօր հասկցած ենք այդ օրէնքը:

Կը կրկնենք այն, ինչ որ երէկ ըրինք ու պարտուեցանք:

Ու միշտ մեր յոյսերը դրած օտարին վրայ, կը վլվլանք միայն, երբ այդ օտարը իր ցաւն ու շահը մոռցած՝ մեր ցաւով ու շահով չի տառապիր մեզի պէս:

Օտարը, այո՛, մեղքեր շատ ունի մեզ հանդէպ: Օտարը, այո՛, անկախ մեր ուժերէն, շատ կապեր ունի մեզ հետ: Բայց

օտարը օտար է. Հայ չէ: Ան կը նայի իրերուն վրայ այնպէս, ինչպէս որ են եւ անոնց կուտայ այն, ինչ որ կ'արժեն: Ո՛չ զարմանանք եւ ո՛չ ալ վրդովուիմք, որ Թուրքին տուին Լօզանը եւ կուտան ժընէւը, իսկ մեզի կուտան բօշայութեան գին: Այդ է մեր գինն ու արժէքը, որովհետեւ ընդունիմք գոնէ այսօր, որ անկախ արտաքին բոլոր սպէկիւլասիօններէ, մենք իբր ապրանք, քաղաքական հրապարակի վրայ, աւելին շարժեցուցինք ինքզինքնիս:

Այս ինքնագիտակցութիւնը ժխտումը չէ երբեք մեծերու եւ հզօրներու դասաւորումներուն, այրեցէ՛ք հատորները այլեւս լափալիսեան այդ ճշմարտութիւններուն, այլ միայն շեշտակի եւ քիչ մը կոպիտ ցուցադրումը մեր իսկ արժէքին եւ մեր ձեռքով մեր կուրծքին կախած վաճառանիշին:

Ինչչե՛ր չէինք կրնար ընել, բայց չըրինք նոյն իսկ աշխարհի հզօրագոյններուն աչքին մեր գինը մեր տառապանքին արժէքով հրապարակելու: Ո՞վ բռնեց մեր ձեռքը ահաբեկող ռումբը նետելու, ո՞վ կաշկանդեց մեր հոգին արցունքոտ թուղթի մը փոխարէն մեր արիւնին վրէժովը խորտակելու բոլոր դուռները:

Սուտ են բոլոր անոնք, որ «օտարը» պիտի պատասխանեն:

Խաբեբաներ են բոլոր անոնք, որ «օտարի»ին շուրջ քարոզներ պիտի կարդան:

ՄԵՆՔ, ՄԵՆՔ ԵՒ ՄԵՆՔ կոտրեցինք մեր ձեռքերը, անբարոյացուցինք մեր հոգիները եւ դարձանք միայն միջնորդ վաճառորդները հայ արիւնին ու ինկանք դուռէ դուռ, ողբաձայն գին կը խնդրենք անոր:

- Բօշայական գաղթականներ չորս հովերուն:

Այս կ'արժենք: Ուզենք լանք, ուզենք ողբանք:

Մեռելները որքան ալ սուրբ ըլլան, անոնք երկրային ապրանքներու տէր ու վաճառորդ չեն, չեն կրնար ըլլալ:

Եւ մենք կուլանք, որ օտար գնորդը անապատներու աւազներու մէջ փռոցացած մեր ոսկորներուն աւելի գին չի տար, քան

աւագի մը արժէքը: Կը վրդովուիինք, որ այնտեղ սողացող օձին աւելի արժէք կուտայ եւ գազանին մորթի մը գին՝ գոնէ: Ծախտող ով որ է՝ գինը անոր կուտան եւ ոչ թէ արցունքոտ աչքերով առեւտուրին ականատես մուրացիկին:

Ինչո՞վ տարբեր է մեր այսօրի դիրքը այդ մուրացիկէն:

Մենք ըլլայինք այսօր բնիկները այդ գերեզմանատան, թեկուզ վայրենի ու հրեշագած, մեզ հետ կը սակարկէին, կուտային վերջապէս գին մը:

Չէի՞նք կրնար մենք ըլլալ:

Կրնայինք, բայց չուզեցինք, որովհետեւ ե՛ւ չըմբռնեցինք դաժան օրէնքը, թէ մենք ըլլալու համար, ուրիշը, գոնէ Թուրքը չպիտի ըլլար, ե՛ւ այսօր ալ չենք հասկցեր ո՛չ բօշայացածներս եւ ո՛չ ալ մտապէս գիջացածները:

Ու կը սպասենք, որ օտարը, միշտ օտարը մեզ աւելի գնահատէ, քան Վրան մը եւ քան Թուրքը:

Ու կը մխիթարենք ինքզինքնիս միայն անով, որ օր մը Թուրքն ալ մեր գինով պիտի ծախուի:

Այո՛, այն օր, որ Թուրքն ալ մեր տգիտութեան հասնի, անոր ալ կը վճարեն նոյնը:

Եւ այս յոյսը իր քաղցրութիւնն ունի մեզ համար, անպայման: Բայց ամէնէն քաղցր յոյսն անգամ փրկութիւն չէ դեռ:

Բայց կարեւորագոյնը այն է, թէ այդ յոյսը իրականացնելու համար ի՞նչ կ'ընենք մենք: Եւ իրաւունք ունի՞նք սպասելու, որ մեր յոյսը օտարը իրականացնէ:

Թուրքը շատ լաւ գիտէ, թէ ինչպէս կ'ընեն առուտուրը հրապարակի վրայ եւ իր գինը կ'աշխատի միշտ բարձր պահել: Չախորդութեան, սնանկութեան ամէն մէկ կրիզի առջեւ ապրանք մը, կարասի մը կը հանէ բազար, թագի մը մէկ գոհարը կամ քարիւղի մը հորը: Եւ գիտենք, թէ ան կը գնուի միշտ մեր պոռչտութիւնները խլացնող գոռ ու գոչով ու հանդէտով:

Մենք դարձեալ լացողի դերին մեջ ենք, խնդրողի ձայնով, որովհետեւ չկրցանք աշխարհի աչքերուն առջեւ գնորդ ձեռք մը կտրել եւ ծախուած հոր մը խարոյկել: Ճիշտ է, որ գնող ձեռքը մէկ չէ, ոչ ալ հորը մէկ: Բայց ամէն ալ արժէք մըն է, ազդանշան մը օրէնքի գիտակցութեան, որ պէտք է խորացնէինք գոնէ մինչեւ այսօր, թէ միշտ գնող մը պիտի ըլլայ, երբ ծախող մը կայ, պէտք է, ուրեմն, ծախողը գոյութիւն չունենայ:

Ծախողը, Թուրքը, կայ դժբախտաբար: Եւ կայ, որովհետեւ մենք ուզեցինք, որ ըլլայ: Ինչ որ մենք պարտաւոր էինք ընել, ուզեցինք, որ օտարն ընէ եւ գոհացանք միայն օտարին ըրածով, օտարին առթած վնասով:

Այսպէս ըրինք երէկ, այսպէս կը վարուինք այսօր:

Պարտուեցանք երէկ, պիտի պարտուինք վաղը:

Այդքան կ'արժենք միայն:

Ժ.

Որքան ուղիղ գիծով մօտենաս գործերուդ, այնքան նուազ պատեհութիւն կ'ունենայ օտարը միջամտելու քու քայլերուդ: Կատարուած իրողութիւն մը առաւելագոյն պատեհութիւնն ունի հարց մը ի նպաստ կատարողին լուծելու:

Ահա, քաղաքական կեանքի մօտօներէն¹⁰ մէկն ալ, որի մէջ Թուրքը անբաղդատելի կարողութիւններ ապացուցած է, քան Հայը:

«Գապահաթ էօլէնտէ՞ մի էօլտիւրէնտէ մի» թրքական յատկանշական ասացուածքը, որ – «էօլէնտէ» պատասխանն ունի իր մէջ – դարաւոր փորձառութեան իմաստութիւնն ունի իր մէջ:

Եւ իսկապէս սպաննողը միշտ ալ պատեհութիւն կրնայ ունենալ յանցանքէն ազատելու, որովհետեւ կ'ապրի, իսկ ամէնէն անմեղ սպաննուողն անգամ, հակառակ բոլոր վճիռներուն, մեռաւ գնաց:

Ազգերու ստեղծագործութեան մէջ դեր չունին պառաւացած լօզունգները:

Մեռնողը որքան ալ սուրբ ըլլայ, ամենաշատը արժանի է ժամի մը: Իսկ խօսքը կը վերաբերի խօսող լեզուին եւ միայն անոր հետ կը խօսին:

Ահա թէ ինչո՞ւ Թուրքը տասնեակ տարիներու ընթացքին կորուստներով առվեցաւ որքան կարելի է քիչ առիթ ձգել օտարին եւ Հայերուն հետ երէկ ու այսօր ուրիշներու հետ կը վարուի այնպէս, որ օտարին միջամտութիւնը գայ միայն գործը կատարելէ յետոյ:

Այս գիտութիւնը ըմբռնելուն արդիւնքն է, որ մեր «բարեկամ» օտարներուն անգամ նպաստաւոր վճիռն ունի ան, եւ

¹⁰ Լոզունգ:

այս գետնի վրայ մեր սգիտութեան արդիւնքն է, որ մեզ բաժին է մնացեր լաց ու ակռաներու կճրտոց:

Այս սկզբունքի կիրառումով է, որ այսօր Հայը գաղթական բոշայութիւն մը կը ներկայացնէ, Թուրքը՝ ազգութիւն: Հային ի նպաստ ձեռք մը վրանն ու պատառ մը հացն անգամ այլեւս տաղտուկ ու ձանձրոյթ է, Թուրքին՝ Շընեւի ազգերու պալատին բազկաթոռները՝ քիչ:

Կ'ուզէինք, որ ուրի՞շ ըլլար:

Օրէնքը գիտցող Թուրքերը գիտէին, որ այսպէս պետք էր ըլլար: Եւ անոնք շիտակ գիտէին:

Ոչ մեր երեմիականները եւ ոչ ալ ուրիշ բան կը փոխեն այս քաղաքագիտական օրէնքը:

Մենք, սգէտներս ու եղկելիօրէն վախկոտներս ենք միայն, որ չենք ըմբռներ, թէ ի՞նչ կ'ուզէ սորվեցնել Քիւրտերու կոտորածներու օրերուն Բիւշտիներու յարգալիր ընդունելութիւնը՝ Շընեւ, հայ կոտորածներու գերեզմանային լռութեան մէջ:

Դարձեալ կրկնենք, մեր այս խօսքերը ո՛չ ժխտումն են շատ մը օտար խարդաւանքներու, ո՛չ ալ ուրացումը օտարէն յոյսեր ունենալու մտածումին, այլ միայն շեշտումը այն հայկական սգիտութեան, որ դեռ չըմբռնեց, թէ իր հետ կապուած ամէն բան ամէնէն առաջ իրեն կը վերաբերի, ինքն է անոր պատասխանատուն:

Քիւրտերը յիշեցինք: Քիչ մըն ալ Քիւրտերու մասին, իբր օտարի:

Կրկնե՞նք, որ մեր խօսքերը մերժումը չեն ուէլ օտար օգուտի: Ով որ ուզէ վիճել ու փրօվակասիօն ընել, թող գիտնայ առաջուց, որ ուէլ մէկին չափ գիտենք, թէ այս մոլորակին վրայ մինակ չենք եւ հետեւաբար շատ թելերով, անկախ մեր կամքէն, կապուած ենք ու կապուած պիտի մնանք օտարին հետ:

Քիւրտը, մեր կարծիքով, օտար է մեզի՝ որքան որևէ օտար: Եթէ նոյն եաթաղանին համն առեր է, եթէ նոյն ցաւերն ունի, այս առաւելութեան դէմ ան ունի մեզ կոտորած ըլլալու եւ վաղն ալ բնականօրէն մեզ հետ զարնուելու բնական անխուսափելի հարկը:

Այս կ'ապացուցանեն զալիք օրերը, եթէ ապրեցանք ու տեսանք:

Իր դրացնութիւնը եւ ցաւի նոյնութիւնը մեզ հետ՝ չեն կրնար ժխտել իր օտարութիւնը: Օտարութիւնը առնուազն այն չափ, որ ան չմեռնի մեր պայքարին համար: Ինչպէս ոչ մէկ օտար պիտի ընէր:

Ան կը կռուի, կը կոտորուի ու կը կոտորէ ԻԲ ԱԶՍՏՈՒԹԵԱՆ համար:

Եւ բարեբաղդ է, որ Հայի պէս չի կոտորուիր:

Ուեւէ իրաւունք ունի՞նք Քիւրտէն ու իր պայքարէն սպասելու այն, որ Ռուսէն, Անգլիացիէն, Ֆրանսացիէն ակնկալեցինք ու չստացանք: Եւ իրաւունք ունի՞նք վաղը, քրտական յաղթանակէ մը սպասել, որ տայ մեզի ինչ որ կ'ակնկալենք:

Եթէ Քիւրտը ազատի, եւ կ'ազատի օր մը, անկախ բոլոր օտար ազդակներէ, ամենէն առաջ ինքն է, որ ինքզինքը արժանի պիտի ընէ ազատութեան: Եւ առաջին օրն իսկ, որ ան հասնի իր նպատակին, լաւ հասկնանք, պիտի մոռնայ մեզ, պիտի ճգնի քրտացնել մեզ, ո՛չ մեր քարոզները, ո՛չ մեր խրատները պիտի օգնեն, որովհետեւ ան պիտի տեսնէ, որ ազգերը այդպէս կը կազմաւորուին ու այդպէս կ'ապրին:

Մեր մխիթարանքը դարձեալ պիտի մնայ քիչ մը աւելի եւս Թուրք կոտորուած ըլլալու եւ քիչ մը եւս թրքական հող կորսուելու սահմանին մէջ:

Այս մխիթարանքը բոլորովին անարժէք չէ, բայց չէ այն, որ մեզի արժէք մը պիտի աւելցնէր: Որովհետեւ օտարի յաղթանա-

կին վրայ միայն ուրախ ըլլալը արժանիք մը չէ մանաւանդ Հային համար, ոչ ալ իրաւունքի տիրացումը մը:

Թուրքին վնասն ու քայքայումը Հային շահն է, ամէն պարագայի տակ: Միջազգետքի կորուստը շահ մըն է մեզ համար, ինչպէս Միւրիայի: Քիչ մը աւելի վաղը՝ Քիւրտիստանի կորուստը: Ամէն մէկը այն համեմատութիւնով՝ ինչ ուժով որ կ'անդրադառնայ Թուրքին քայքայումին: Վաղը իտալական պատերազմ մը եւ Իզմիրի մը կորուստը դարձեալ շահն է մեր: Բայց ասոնցմէ ո՛չ մէկը՝ մեր փրկութիւնն է: Ահա այն, որ իբր չափանիշ պիտի ծառայէ մեր յոյսերուն: Ատկէ աւելին մեզ պիտի վերապահէ նոր յուսախաբութիւն, նոր «բարեկամ»ներու դաւերու դէմ վլվլուկ:

Ամէնէն աղէտաւորը, սակայն, պիտի ըլլայ այն, որ ռեւէ օտարի կողմէ, այդ ըլլայ Անգլիացի, Իտալացի թէ Քիւրտ, Թուրքին հասցուելիք վնասին վրայ դրած մեր յոյսերը, չընենք ինչ որ կրնանք ընել: Եւ մենք կրնանք ընել շատ բան, շատ բան անկախ բոլոր օտարներէն, որոնք պիտի ընեն ու կ'ընեն իրենց բոլոր կարելին առանց մեզի, առանց մեր բաղձանքին ու խրատին: Որովհետեւ անոնք մեզմէ աւելի խելացի են ու գիտեն, թէ այն ալ իրենց համար օտար է եւ օտարը միշտ օտար է:

Եւ վերջապէս կայ անիմանալի եւ սրբազնագոյն մէկ հոգեվիճակ, բացի քաղաքագիտական երկաթ օրէնքէն:

Ո՛ր է տղամարդութիւնը այն հոգիին, որ իր միլիոններով նահատակներուն արիւնի փոխարինութիւնը Քիւրտի կամ ռեւէ օտարի յաղթանակով կրնայ բաւարարել: Թշնամին պարտուած տեսնել ուրախալի է, բայց թշնամին պարտել իր իսկ ձեռքով՝ ահա հոգեկան բաւարարութեան այն գերագոյն աստիճանը, որ հոգեկան տղամարդութիւնը կը կոչենք:

Այս տղամարդութիւնը միշտ խոտոր կը համեմատի օտարի վրայ դրուած յոյսին: Եւ որպէս զի հետզհետէ սկսինք սորվիլ թէ՛

քաղաքագիտութեան օրէնքը եւ թէ՛ արութիւն տանք այդ հոգեվիճակին, մեր յոյսերը օտարին վրայ պէտք է իջնէ նուազագոյն աստիճանին: Մեր խանդավառութիւնները պէտք է մնան թշնամիի ուրիշի ձեռքով վնասին ուրախութեան սահմաններուն մէջ:

Մեր այս գրուածքները աւելիովը եւ խիստ յանդգնօրէն խոստովանութիւններ են մեր տկարութեան եւ յետամնացութեան, այնպէս որ թող չփորձուի մեր տկարութիւնները լրացնելու փաստարկութիւններով ջրել մեր հռչակած սկզբունքները: Տկարութիւն մը օտարով լրացնելը ուրիշ բան, ուրիշին ապաւինիլը՝ այլ բան: Հայը այստեղ ալ, երէկ եւ այսօր, առաջինին դրականութիւնը հասցուցեր է երկրորդին բացասականութեան: Ու չենք տարակուսիր, որ վաղը Քիւրտերէն ալ պիտի խաբուինք, որովհետեւ կ'երեւի, որ անոնք մեզմէ աւելի գիտուն են ազգ ստեղծելու գործին մէջ: Այն միակ փաստը, որ Քիւրտերը Թուրքերուն հետ կը վարուին այնպէս, ինչպէս Թուրքերը վարուեցան մեզ եւ կը վարուին իրենց հետ, կը կոտորեն մանուկն ու կինը եւ կ'աւերեն գիւղն ու քաղաքը, բաւական է անգիր, լեռնցի Քիւրտին տալ առաւել նօթ եւ հաւատալ իր ազատագրութեան պայքարին:

Մենք, որ յաւակնութիւնն ունինք Քիւրտին բան սորվեցնելու, մեր կարծիքով, շատ բան ունինք Քիւրտէն անգամ սորվելիք:

Լաւագոյն պարագային անգամ մեր դիրքը տարբեր չէ այն գիւղացի վարժապետէն, որի առջեւ այբենարան կարդացողներէն շատեր համալսարանական են դարձեր: Նման դիրք մը ո՛չ հոգեկան առաքինութիւն է եւ ո՛չ ալ անոր հպարտութիւնը արդար: Թերեւս օր մը այդ համալսարանականները տօնեն անգամ յոբելեանը իրենց վարժապետին, յոբելեան մը դամբանականի համարժէք:

Եւ մեր կարծիքով ատկէ աւելին իրաւունք չունին սպասելու, արժանի չեն ստանալու նոյն իսկ Քիւրտէն, իբր օտարի,

բոլոր անոնք, որ կը հաւատան Քիւրտէն ստանալ իրենց քաղաքական կեանքն ու ազգը:

Քու գործերուն անդաւաճան մէկ հոգի կայ, դուն ինքդ ես, քու ուժդ է: Որքան խոր է այս դաւանանքդ, այնքան աւելի կը նուազի օտարին դաւաճանութիւնը: Ո՛չ պզտիկութիւնը, ո՛չ ալ տկարութիւնը կրնան խախտել այս օրէնքը:

Ու կեանքը չըսէ՞ր ահա, թէ այս օրէնքը մեր ուժին սահմաններուն մէջ անգամ, նուազ կ'ըմբռնենք ո՛չ թէ Թուրքէն, այլ Քիւրտէն անգամ:

ԺԱ.

Թուրքերու եւ մեր տարբերութիւններէն մէկն ալ շեշտուած կերպով հրապարակի վրայ է այն փաստով, որ մինչդեռ անոնք կը գործեն, մենք կը խօսինք: Եւ ինչ որ ամէնէն տխուրն է, խօսիլն ու գրելը մեզի համար դարձեր են գործ:

Հիմնագրկելու համար նախապէս բոլոր այն փրօվակա-սիօն-ները, որոնք պիտի ողողեն հրապարակը մեր միտքերուն դէմ, յայտարարենք, որ երբեք չենք ժխտեր ո՛չ բեմին, ո՛չ մամուլին ուժն ու արժէքը: Անոնք ունին իրենց տեղը: Բայց կայ շատ էական կէտ մը, որ անտեսած ենք մեր գրելախտին ու խօսելախտին մէջ: Այն, որ գրիչն ու լեզուն իրենց ուժը միայն բազուկէն կ'առնեն:

Ահա, ինչ որ Թուրքերը աւելի լաւ գիտեն ու կը գործադրեն, քան մենք՝ Հայերս:

Եւ եթէ այս սկզբունքին վրայ աւելցնենք նաեւ այն, որ հիմնապէս տարբեր են եւ տարբեր պէտք է ըլլան պետական կեանքով ազգի մը եւ ազատագրութեան ձգտող յեղափոխական ժողովուրդի մը խօսելու ու գրելու ձեւը, այն ատեն ո՛չ միայն իրենց ուժը կը կորսնցնեն այն առարկութիւնները, թէ Թուրքը մեզմէ աւելի ունի բեմ ու մամուլ, այլ նաեւ աւելի կը շեշտուի մեր խօսելու ու գրելու ձեւին ապարդիւնութիւնը:

Եւ իսկապէս, ի՞նչ կը ներկայացնեն վերջնապէս մեր բեմերն ու մամուլը:

Ներքին կեանքի մէջ եթէ դեր մը ունին անոնք, եթէ պզտիկ չափով մը կ'արդարացնեն իրենց գոյութիւնը, խոստովանինք, որ անոնք բացարձակապէս անպէտ են արտաքին աշխարհի համար:

Վերցուցէք ունէ թերթ, հոն ի՞նչ գոհար խմբագրականներ չէք գտներ քաղաքական աշխարհի ճակատագիրը տնօրինող: Ու ոչ խմբագիրը եւ ոչ ընթերցողը օր մը հարց կուտան.- վերջապէս

ն՝վ կը կարդայ այդ յօդուածները: Փուանքարէ՞ն¹¹, Մուսօլինի՞ն¹² թէ Լոյս Ճօրճը¹³ կ'ուզենք առաջնորդել մեր քաղաքագիտական իմաստութիւնով:

Հայ հասարակութիւնը քաղաքական աշխարհին ծանօթացնելու պատճառաբանութիւնը մելանի ու թուղթի արժէքովն իսկ չարժէքաւորեր բոլոր այդ խմբագրականները:

Իսկ այն ողբ ու կոծը, երեսիականներն ու հայհոյանքները, որոնցմով լեցուն են մեր թերթերը, կրկնութիւնները մեր վիշտերուն ու խաբուածութիւններուն, որոնք այլէս Հային համար իսկ տաղտկալի դարձեր են, մարդ չի գիտեր ինչո՞ւ համար են:

Այս քանի՞ տարի է կուլանք ու կը պոռանք.-

Մեզ խաբեցին: Հայաստան ըսին՝ խօսքերնին չպահեցին: Օճախ խոստացան՝ չկատարեցին: Հայկական Դատը գաղթականական հարց մը դարձուցին: Ռուսական տափաստաններն անգամ շատ տեսան: Նանսէնի ծրագիրն ալ չարժեցուցին մեզ: Արժանքին կ'առաջարկեն: Փերու կը դրկեն: Ստախօսներ, ինկածներ, սրիկաներ...:

Հարց չտուինք օր մը.-

Ո՞վ կը կարդայ այս գրուածները: Ո՞վ, եթէ կարդայ անգամ (մեր խօսքը օտարի մասին է) կը հասկնա՞յ: Եթէ հասկնայ անգամ՝ ո՞վ ծաղրէ մը աւելիով կը փոխարինէ այս բոլորը:

Իսկ եթէ Հային համար են այս բոլորը, մեր կարծիքով, ամէն մէկ հայ աւելիովը գիտէ իր ցաւերն ալ, օտարին սրիկայութիւններն ալ: Ու այս բոլոր ողբ ու կոծը մազ մը անգամ չեն փոխեր ո՛չ մեր կացութենէն, ո՛չ օտարին վերաբերմունքէն:

¹¹ Ռայմոն Պուանկարե (1860-1934): Ֆրանսիայի նախագահ (1913-1920), վարչապետ (1912-1913, 1922-1924, 1926-1929):

¹² Բենիտո Մուսօլինի (1883-1945): Իտալիայի առաջնորդ (1922-1943):

¹³ Դեհոյ Լլոյդ-Ջորջ (1863-1945): Մեծ Բրիտանիայի վարչապետ (1915-1922):

Եթե այս բոլորը կրկնեինք այն միտքով, որ չվախնայինք եզրակացնել եւ յայտարարել, թե այս բոլորը եղան ու կ'ըլլան, որովհետեւ անոնց արժանի ենք, նոր ու ճշմարիտ բան մը ըսած կ'ըլլայինք:

Իսկ եթե ըսեինք այդ նոր ու ճշմարիտ խօսքը եւ անկէ անվախօրէն հանեինք որքան յանդուգն նոյնքան արդար վճիռը – թե պէտք է այլեւս բօշայէ մը աւելի արժենք եւ արժենք մեր իսկ միջոցով – մեր մամուլն ու խմբագիրները անցած կ'ըլլային իրենց դերին:

Ու պատկերը ահա մեր աչքին առջեւ է:

Մեզ կը լացնեն ու մենք կուլանք եւ մեր ճիչերով կ'աշխատինք, որ ուրիշներ մեր արցունքը սրբեն, յայտարարելով միեւնոյն ատեն, որ ուրիշները խաբեբաներ են ու սրիկաներ եւ երբեք չպիտի սրբեն մեր արցունքները:

Թուրքերը կը լացնեն մեր եօթը պորտը եւ յետոյ կը սկսին արդարացնել իրենց արարքը, վստահ, որ քաղաքական կեանքի մէջ իրաւունքն անորն է, որ կը կատարէ եւ յետոյ պաշտպանողականը կը խօսի:

Ի՛նչ կ'ուզենք գրենք ու խօսինք: Վաղը Փերուի գաղափարին հետ անգամ պիտի հաշտուինք: Չէ՞ որ ասկէ առաջ շատ բաներու դէմ ճուացինք ու յետոյ հաշտուեցանք:

Եթե գործի լեզուն չունինք, հաշտուինք մեր վախճանին հետ: Բօշայական ճուոցները նախաստինքէ մը աւելի չեն աւելցներ մեր մեղքերը: Ամօթ է:

Մէկ գնդակ հազար թերթի ու ճառի ուժ ունի:

Առանց ժխտելու դերը զանազան ճիգերուն, կը կրկնենք՝ մէկ գործ հազար խօսեքն աւելի կ'արժէ:

Օրինակի համար ըսենք միայն, առանց ժխտելու Ամերիկայի մէջ, ուր միակ իսկապէս օտար փրօփականողի օրգանն

ունինք, յանձին Press Bureau-ի¹⁴, թափուած ճիգերուն արժէքը, թէ մէկ գնդակ շատ աւելի ազդու ու կտրուկ կերպով պիտի լուծէր Լօզանի դաշնագրին հարցը եւ պիտի արժէքաւորէր հարիւր հազարներով փանֆլետները, քան այն, որ տասնեակ տարիներէ ի վեր եղած է:

Մենք դեռ չհասկցանք, թէ բացի Թուրքին պետականութեան եւ անկէ բղխած ազդակներէն, կայ նաեւ Թուրքիայի մէջ Հայը բնաջինջ ընելու գործին հիմնական ազդակը, որ մեր տասնեակ տարիներու ճիգերը մէկ մարդ, մէկ Մուխթար բէյ, կը յաջողի մէկ օրէն միւսը հակազդելու եւ պարտութեան ենթարկելու չափ յաջողիլ:

Չմեղադրենք Ամերիկան, որ իր խօսքերը կը մոռնայ եւ մեր արիւնը կը ծախէ: Եթէ 150.000 հայութիւն չապացուց, թէ ինք ծախու ապրանք չէ, մեղաւոր չէ ծախողը:

Ապա եթէ հաշուենք աշխարհի ամէն անկիւններուն մէջ մեր անիմաստօրէն թափած ճիգերը, որոնց բոլորին մէջ արժէք մը կրնայինք դնել հայերս, հաւատացէք, որ միայն նիւթական գումարով կրնայինք Հայաստան մը գնել:

Եթէ ճանչնայինք մեր մահին մեծութիւնը եւ հոգեվարքին ահաւորութիւնը, այլեւս քիչ պիտի խօսէինք օտարներու պատասխանատուութիւններուն վրայ եւ մեր խօսքը պիտի ըլլար գործը:

Թո՛ղ անգամ մըն ալ Հայն ըլլար ոճրագործ, թո՛ղ անգամ մըն ալ Հայն ըլլար բարբարոս ու գազան: Ինչո՞ւ դեռ չկրցանք հասկնալ, որ ոճրագործն ու գազանը բօշայէն աւելի կ'արժեն: Անոնց արիւնը ո՛չ միայն ծախու չեն հանուիր, այլ անոնց հետ յարգանքով կը վարուին:

¹⁴ ԱՄՆ-ում ՀՅԴ արտաքին քարոզչութեան մարմին:

Կամ սուտ են ու կեղծ մեր լացն ու կոծը մեր կացութեան առջեւ կամ չենք ըմբռներ զայն իսկապէս: Այլապէս, Հայր, այսօր մանաւանդ, աշխարհի ժողովուրդներուն մէջ առաջինը պիտի ըլլար յանդուգն: Ո՛վ որ ոչինչ ունի կորսնցնելիք, ոչինչ ունի վախնալիք:

Եւ հայր ոչինչ ունի կորսնցնելիք: Բայց ամենէն վախկոտ է դժբախտաբար:

Քանի այսպէս է, լանք թէ ողբանք, Փերու ալ պիտի երթանք եւ դեռ աւելի հեռուն ալ, որովհետեւ ասոր միայն արժանի ենք, ասոր միայն արժեցուցինք ինքզինքնիս:

ԺԲ.

Փաստերու վրայ այս թեթեւ ակնարկներն անգամ բաւական են շեշտուած կերպով երեւան հանելու հայ պատասխանատուութեան բաժինը մեր աղէտներուն մէջ, որ երբեք ժխտումը չէ օտար, արտաքին պատասխանատուութիւններուն, եւ, ինչպէս որ կարեւորագոյն է, հրաւիրելու մեզ տեսնելու անպէտքութիւնն ու աղէտաւորութիւնը այն փորձուած ու ժանգոտած զէնքերուն, որոնց գործածութիւնը անցեալին մէջ եթէ մեղանշում մըն էր, անոնց միայն յամառօրէն կառչիլը այսօր՝ ոճիր մըն է:

Այս էջերով մեր նպատակն է բացէ ի բաց յայտարարել, որ մեր անխուսափելի գոյամարտին մէջ, որ գօտեմարտն է Հայը իսպառ բնաջնջելու ձգտող թուրք ոճրագործ ուժին, եւ Հայ ազգ կազմել նպատակադրող հոգեւարող ուժին, յանցապարտ պիտի ըլլայ Հայ ժողովուրդը կառչած մնալով հին զէնքերուն, իսկ անոր դեկավարութիւնը՝ գիտակցօրէն ոճրապարտ, զայն հին զէնքերու ու միջոցներու օրօրներով օրօրելով:

Մեր հին զէնքերն են ատրճանակը, ռումբը, որոնք պարագայաբար որքան ալ դեռ իրենց արժէքը պահած ըլլան, հինցած են այլեւս:

Մեր հին միջոցներն են օտարներու վրայ, անոնք ըլլան պետութիւններ կամ ապստամբ տարրեր, ամբողջապէս դնել մեր պայքարին յոյսերը, որոնք որքան ալ արժէքաւոր ազդակներ ըլլան մեր իսկական ու գլխաւոր թշնամի – Թուրքը – վնասելու տեսակէտէ, երբեք չեն դադրիր մեզ յուսախաբելէ ու դաւելէ:

Կրկնենք, որ այս խօսքերը երբեք բնոյթը չունին այդ զէնքերուն ու միջոցներուն աւելի կամ պակաս արժէքը ժխտելու, այլ միայն կ'ընտուին անոր համար, որ այլեւս ամփոփուիք եւ ՄԵՐ գոյամարտը ՄԵՐ միջոցներով, միշտ տրամադրելի ու անխարդախ, առաջ տանելու մասին ո՛չ թէ մտածենք ու խօսինք,

որովեհետեւ ոճրապարտ ենք, եթէ չենք մտածած դեռ, այլ անոնցմով գործենք:

Թշնամիի ծրագիրներուն ահաւորութիւնը եւ մեր պայքարին ահեղութիւնը դեռ չեն ապացուցաներ, որ մենք կռուելու ու նոյն իսկ յաղթելու յոյս չունինք: Այս յայտարարութիւնը անոնց կը պատկանի, որոնք կամ սարսափահար ու ձեռնածալ մահին կը դիմեն կամ յուսահատութեան խօսքերով չի սարսափելու եւ չի սարսափեցնելու քաղաքականութիւնով նոր լօզունգներ կը հրամցնեն:

Ինչպէս չենք վախնար մեր գոյամարտի գոյութիւնը յայտարարելէ, չվախնանք նաեւ հռչակելու, թէ Հայ ժողովուրդը հասած է արդէն այն կէտին, որ արդարօրէն իրաւունք ունի այլեւս կիրարկելու Բելջիգացի Կարտինալ Մերսիէի խօսքերը. «Այս պատերազմէն յետոյ Հային իրաւունք բռնաբարուելու պարագային ո՛չ ոք իրաւունք ունի մեղադրելու զայն, եթէ ազգովին անիշխանական դառնայ»:

Ընդունինք նաեւ, որ կեղծ են այն խորհրդաւորութիւնները, որոնք կը ծառայեն միայն պարապութիւններ քօղարկելու, եւ կեղծ են այն զգուշաւորութիւններն ու խոհեմութիւնները, մեր զէնքերը գաղտնի պահելու տեսակէտէ:

Յայտնել, որ Հայը իրաւունք ունի զէնքի մէջ խտիր չդնելու եւ այս դաւանանքը պոռալ աշխարհի երեսին՝ դեռ չի նշանակեր զէնքեր ցուցադրել:

Ընդունիլ եւ նոյն իսկ յայտարարել ամբողջ հայութեան, որ Հայը ո՛չ բանակով, ո՛չ քաղաքական փրօփագանդով, ո՛չ ռումբով, ո՛չ թնդանօթով, ո՛չ սաւառնակով կրնայ յաղթահարել Թուրքը՝ ո՛չ միայն մեր զէնքերու գաղտնիքը տալ չի նշանակեր, այլ կը նշանակէ Հայը զիտակ պահել իր տկարութիւններուն, թշնամի ուժեղութեան եւ զայն արգիլել իր ուժերը անօգուտ վատնելէ եւ զանոնք համախմբել մեր տկարութիւնները լրացնող զէնքեր ճարելու:

Օրինակի համար ըսենք, որ որքան ալ գեղեցիկ ըլլայ հայ յեղափոխականին սաւառնակով մը թռիչքին եւ քանդիչ ռումբով մը Էնկլիւրիի¹⁵ ռճրաբոյնը ոմբակոծելուն պատկերը, պէտք է ընդունինք, որ այդ ո՛չ հիմնական միջոց մըն է, ո՛չ ալ մեր ուժերուն տակ իյնող զէնք մը: Ո՛չ սաւառնակ կրնանք ունենալ, եթէ ունենանք իսկ կայան մը չունինք, եթէ կայան իսկ ունենանք՝ թրքական հակասաւառնային մէկ ռումբ բաւական է, որ մեր բոլոր գոհողութիւններն ու սիրուն երազը օդը ցնդին:

Այս օրինակը անոր համար, որ մեր ուժերուն գիտակց-
ութիւնը ունենանք եւ մեր ուժերը իր տեղին գործածենք:

Փառք մարդկային ուղեղին եւ գիտութեան ուժին: Ո՞վ արգիլեց մեզ գիտութեան աղօթելու, երբ ամբողջ աշխարհը այսօր իր տաղանդը դրած է ի սպաս գիտական միջոցներուն:

Ի՞նչ արժեցին աշխարհի վլվլուկները գերմանական «անմարդկային» կազային առաջին յարձակողականին առջեւ հանուած: Գերմանը իր ուժերուն տկարութիւնը լրացուց զէնքով մը ու ահա ինչ որ «անմարդկային» էր, դարձաւ այնքան մարդ-
կային ռազմական զէնք պատերազմի համար, որքան մէկ հրա-
ցան, ու ահա այսօր կազային զէնքերու թիւն ու տեսակը հազար-
ներով կը հաշուուին:

Բայց հայ «մարդկայնութեան» գաղափարը, հակառակ
անմարդկային ամէն միջոցներու միլիոնով զոհեր տալուն, դեռ
կառչած կը մնայ հին թուղթերուն, որոնք, բացի մենէ, ամբողջ
աշխարհի կողմէ աղբանոց նետուած են:

Օ՛, մեր յաւակնութիւնը, որ ամբողջ աշխարհի իսկ դասեր
տալու հովեր ունի:

Դեռ մնա՞նք այնքան միամիտ, կարծելու համար, որ վաղը,
նոր պատերազմի մը պարագային, «անմարդկային» նոր միջոցներ

¹⁵ Անկարա:

ալ չպիտի դառնան գերազանցօրէն մարդկային: Չէ՞ որ բօլշեւիկները փորձեր կը կատարեն գտնելու համար ձեր ռուսներով ինչպէս թունաւոր կազերով, նոյնպէս եւ վարակիչ հիւանդութիւններու միքրոբներով ուրբակոծելու թշնամին: Եւ այս բաներու մասին ամէն օր կը խօսուին, կը գրուին եւ անոնց շուրջ փորձեր կը կատարուին:

Մենք ոչ միայն այնքան միամիտ չենք կարծելու, որ բօլշեւիկեան նման փորձ մը վաղը գերմանական կազի փորձէն աւելի աղմուկ չպիտի հանէ եւ անոնք Գերմաններէն աւելի գազան չպիտի համարուին, այլ նաեւ կը համարձակինք յայտնելու, որ ո՛վ որ մարդկայնութեան հինգաձ քարոզներով կ'օրօրէ Հայր կամ կեղծ ձեւերով կը ցրուէ հայ վրէժխնդիր միտքը, միշտ աւելի քան անմարդկային զէնքեր փնտռելու ճիգերուն մէջ, մեծագոյն ոճրագործն է հայ ժողովուրդի ազատագրական այս գոյամարտին մէջ:

Ո՛չ որ, ո՛չ մէկ ազգ ու ժողովուրդ այնքան իրաւունք ունի նման միտքերու նուիրուելու ուխտուած կերպով, քան Հայր: Որովհետեւ ոչ որ այնքան տմարդօրէն կոտորուեցաւ, դաւաճանուեցաւ, բնաջնջուեցաւ ու կը հոգեւարի: Եւ ո՛չ մէկ ազգ ու ժողովուրդ այնքան տկար է ու պէտք ունի իր տկարութիւնները լրացնելու նոյն իսկ յաւիտենապէս ամենաանմարդկային զէնքերով:

Այս իրաւունքը իր գոյութեան արդարացումը կը ստանայ մեր զոհերէն եւ մեր գոյամարտի սրբազնութենէն:

Պէտք է, սակայն, մոռցած չըլլալ միլիոնաւոր նահատակները եւ ուխտուած զինուորներ եղած ըլլալ մեր գոյամարտին:

Անկէ յետոյ այս գոյամարտի պայքարին ահեղութիւնը ո՛չ թէ միայն չի կրնար յուսահատօրէն ջախջախել մեր բազուկները, այլ մեզ կուտայ մեր ճակատագրական պայքարին ահաւորութեան աստուածութիւնը, որ այս անգամ արդարօրէն եւ իսկապէս պիտի թքներ աշխարհի երեսին, կանգնած թշնամիին դիակներուն վրայ:

Եթե հրաժարելիք առաւելապէս անհիմն եւ մեր ունեցած իսկապէս շատ քիչ առաւելութիւններն եւ հաւատայինք կարելիութեան, ինչպէս մենք համոզուած ենք, եւ մարզէինք յաւակնութիւն մը անմարդկայնութեան մարզին մէջ, այդ ըլլալով արդարագոյն իրաւունքը, մինակը պիտի ըլլար նաեւ մեզ ՄԱՐԴ, ԱԶԳ ՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ դարձնելու:

Մեր ուժը անմարդկայնութեան մէջ միայն պէտք է գերակշռէ թշնամիին ուժերը:

Այսպէս պէտք է դաւանինք եւ այսպէս պէտք է տանինք մեր գոյամարտը, որ բոլոր դաւերուն ու թշնամութիւններուն հետ ունի նաեւ դաշնակից՝ ժամանակը, մեզի դէմ:

Վա՛յ չհասկցողին:

Որովհետեւ ան պիտի ըլլայ պարտուողը: